AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:08 Page 1

Azg Ազգ

8 ԱՊՐԻԼ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 62 (4442)

ISSN: 1829-1651

Հաագայի միջազգային դատարանը կարող է քննել Հայոց ցեղասպանության հարցը

Այս մասին եզրակացություն է կազմվել ՀՀ արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանի** եւ Երեւանում գտնվող Հաագայի միջազգային դատարանի դատախազ **Լուիս Մորենո-Օկամպոյի** հանդիպման ընթացքում: Վերջինս նշել է, որ հարցի քննության համար պետք է հաշվի առնել նաեւ Հայաստանի ՍԴ-ի դիրքորոշումը Հռոմի դատական նիստում ձեռք բերված համաձայնության վերաբերյալ: Գեւորգ Դանիելյանն իր հերթին շեշտել է, որ «Ցեղասպանության ճանաչումն առաջին հերթին անհրաժեշտ է Թուրքիային»:

Էրդողանը Սարգսյանի հետ Վաշինգտոնում երկկողմ հանդիպում է հայցել

Իսկ Օբամա-Սարգսյան-Էրդողան հանդիպում չի՞ լինելու

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երեկ թուրքական կողմի նախաձեռնությամբ Հայաստանում էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի հատուկ բանագնաց Ֆերիդուն Սինիրլիօղլուն, որ նաեւ Թուրքիայի առաջին փոխարտգործնախարարն է: Վերջինս երեկ հանդիպել է Հայաստանի արտգործնախարարի, ապա նաեւ Հայաստանի նախագահի հետ:

Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ Ֆերիդուն Սինիրլիօղլուն քննարկել է Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործընթացին առնչվող հարցեր:

Նախարար Նալբանդյանը վերահաստատել է միջազգային հանրության տեսակետներին համահունչ Հայաստանի մոտեցումները՝ շարժվելու առաջ, առանց նախապայմանների վավերացնելու եւ իրագործելու Հայաստանի եւ Թուրքիայի ստորագրած արձանագրությունները եւ այդ ուղղությամբ թուրքական կողմից գործնական քայլերի ակնկալիքը:



Մինչ բանագնացի Երեւանում հայտնվելը, թուրքական մամուլի վկայությամբ, Փարիզում գտնվող վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը Ֆերիդուն Սինիրլիօղլուի Երեւան ուղեւորվելու առնչությամբ հայտարարել էր. «Ես արտգործնախարարության խորհրդական որն Ֆերիդունին որպես հատուկ ներկայացուցչի գործուղեցի Երեւան՝ նամակով հանդերձ: ԱՄՆ-ում նախատեսվող երկկողմ հանդիպման (նկատի ունենալով Հայաստան-Թուրքիա հանդիպումը - Ա.Հ.) առնչությամբ որոշումը կկայացնեմ այն ժամանակ, երբ ես կհանդիպեմ նրա (հատուկ ներկայացուցչի - Ա.Հ.) հետ»:

Տես էջ 2

ԲՐՅՈՒՍԵԼ

Զանգվածային խռովություններ Ղրղզստանում

Երկրում արտակարգ դրություն է հայտարարված

Ղրղզստանի հյուսիսային շրջաններում սկիզբ առած զանգվածային խռովությունները մեծ թափ են ստանում: Երկրի ընդդիմության՝ հատկապես ընդդիմադիր «Աթա-Մեքին» կուսակցության կազմակերպած խռովությունները հասել են երկրի մայրաքաղաք Բիշքեկ: Մի շարք շրջանների վարչական հաստատություններ արդեն ընդդիմության հսկողության տակ են: Իսկ մայրաքաղաքում ապստամբները գրավել են Ազգային անվտանգության շենքը՝ ազատելով բոլոր ձերբակալվածներին, երկրի խորհրդարանի շենքը՝ դուրս հանելով ողջ թանկարժեք գույքն այնտեղից: Ի դեպ, գրոհի ժամանակ ղրղզական խորհրդարանում ոչ մի պատգամավոր չի եղել, եւ դիմադրություն չի ցուցաբերվել ընդդիմությանը: Ավելի վաղ բողոքավորները հրկիզել էին երկրի գլխավոր դատախազության շենքն ու «գրավել» էին Ղրղզստանի հանրային հեռուստաընկերությունը: Ամեն 7 րոպեն մեկ ընդդիմադիր գործիչները դուրս են եկել ուղիղ եթեր՝ պահանջելով երկրի կառավարության հրաժարականը, խորհրդարանի ցրումը: Ապստամբները երեկ հարձակվել են նաեւ երկրի կառավարության շենքի վրա, սակայն այստեղ ոստիկանությունը կրակ է բացել ցուցարարների վրա, որի հետեւանքով մահացել են, ըստ նախնական տվյալների, 17, վիրավորվել՝ 140 հոգի: Նախօրոք հայտարարվում էր, որ կառավարության շենքի վրա հարձակման ժամանակ սպանվել է երկրի արտգործնախարարը, սակայն ավելի ուշ նախարարությունից հերքել են այդ լուրը: Ղրղզստանի նախագահ Կուրբանբեկ Բակիեւը երկրում հայտարարել է արտակարգ դրություն:

Մինսկի խումբը ապրիլին կայցելի տարածաշրջան

«Արմենպրեսի» տեղեկացմամբ՝ այս մասին Բաքվում երեկ հայտարարել է Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Դորոխինը: Դեսպանը նշել է, որ այցի կոնկրետ ժամկետը դեռ ճշված չէ. «Համանախագահները կայցելեն հին կազմով՝ Յուրի Մերզլյակով, Բեռնար Ֆասիե, Ռոբերտ Բրադկե: Դա կլինի Մերզլյակովի՝ որպես Մինսկի խմբի համանախագահի, վերջին այցելությունը տարածաշրջան», հայտարարել է Դորոխինը:

Սոֆիսակ դրոշներով 100 ադրբեջանցիներ

Ադրբեջանական «Ազադլիգ»-ի տեղեկացմամբ, Աղդամի՝ ադրբեջանական Դորդ յոլ շրջանում բնակվող մոտ 100 ադրբեջանցիներ ապրիլի մեկին՝ սոֆիսակ դրոշներով, ցանկացել են մտնել հայկական տարածք: «Եթե սեփական պետությունը տեր չի կանգնում մեզ, ապա մենք օգնության կդիմենք հայերին», հայտարարել են ադրբեջանցիները: Բանն այն է, որ տվյալ շրջանի բնակիչների տները աղետալի վիճակում են: Անձրեւաջրերից վերջնականապես քայքայված տները փլուզվել են, եւ բնակիչները, բազում անպատասխան դիմում-խնդրանքներ ուղարկելով իշխանություններին, մնացել են անօթեւան: «Սոֆիսակ դրոշները ձեռքերին 100 ադրբեջանցի փորձել են հանձնվել Լեռնային Ղարաբաղի իշխանություններին, անգամ ոստիկանությունը չի կարողացել կանգնեցնել երթի զայրացած մասնակիցներին: Միայն Բարդայում տեղակայված ներքին զորքերի ստորաբաժանումների օգնությամբ է հնարավոր եղել կասեցնել Ղարաբաղ շտապող ադրբեջանցիներին: Դեպքի առիթով շրջան է ժամանել Ադրբեջանի փախստականների եւ հարկադիր վերաբնակեցողների գործերով պետական կոմիտեի ղեկավար Ալի Հասանովը», տեղեկացնում է «Ազադլիգը»:

Գաղտիք չէ, որ յուրաքանչյուր պատերազմում կարեւորագույն դեր են խաղացել սահմանամերձ շրջանների բնակիչները: Նույն ղարաբաղյան պատերազմում հաղթանակը կերտվել է նաեւ սահմանային գյուղերի բնակիչների օգնությամբ. նրանք անմիջականորեն իրենց տներն են պաշտպանել: Եվ որ ԼՂՀ սահմանին գտնվող ադրբեջանական բնակավայրի բնակիչները գերադասում են ապրել հավանական թշնամու երկրում, եւս մեկ անգամ ապացուցում է, որ Ադրբեջանն այսօր պատրաստ չէ պատերազմելու, քանի որ զենքի բազմազանությունն ու շատ լինելը չէ, որ հաղթում են պատերազմում, այլ մարդը, որը սիրում է իր երկիրը, որը «100»-ներով չի լքում այն՝ մեկնելով թշնամի ներկայացված երկիր, որքան էլ պայմանները աղետալի լինեն: Մեր սահմանամերձ գյուղերում անձրեւաջրերից տներ չե՞ն փլուզվում, կամ բնակիչները անպատասխան նամակներ չե՞ն գրում իշխանություններին...

Հ. Ա.

Սարկոզին անդրդվելի է Մերկելի պես

Օրեր առաջ Թուրքիա այցելած Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւս մեկ անգամ կրկնեց. «Գերմանիան կողմ է Թուրքիայի՝ Եվրոմիությանը ոչ թե լիիրավ անդամակցելուն, այլ արտոնյալ գործընկերությանը»: Արդեն երեկ «եւս մեկ անգամ կրկնելու» հերթը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիինն էր, որը Փարիզում հանդիպեց պաշտոնական այցով Ֆրանսիայում գտնվող Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Սարկոզին շեշտել է, որ Ֆրանսիայի համար ընդունելի է միայն այն տարբերակը, որ «Թուրքիան Եվրոմիության համար լինի արտոնյալ գործընկեր, բայց ոչ լիիրավ անդամ»: Եվ Ֆրանսիան, եւ Գերմանիան բազմիցս են կրկնել իրենց այս դիրքորոշումը:

Սարկոզի-Էրդողան հանդիպման ժամանակ վերջինս Ֆրանսիայի նախագահին հրավիրել է այցելել Թուրքիա, հրավերը նախագահն ընդունել է, նշվում է, որ Նիկոլա Սարկոզին Թուրքիայում կլինի միայն 2010-ի նոյեմբերից հետո:

Ի դեպ, հանդիպումից հետո մամուլի ասուլիս չի կայացել, պատճառները չեն նշվում:

Արմենական երիտասարդները միանում են ծառատունկի նախաձեռնությանը

Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության «Երիտասարդ Արմենական» ակումբը, տեղեկանալով Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությանը՝ «Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առթիվ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնկել մեկուկես միլիոն ծառ», հայտնում է իր զորակցությունն ու պատրաստակամությունը՝ միանալու այս ազգանվեր նախաձեռնությանը: «Երիտասարդ Արմենական» ակումբի անդամները պարտավորվում են այս հինգ տարիների ընթացքում Երեւանում եւ Հայաստանի մարզերում տնկել 25000 ծառ: Առաջին ծառատունկը նախատեսվում է սեփական ուժերով կազմակերպել ապրիլի 17-ին Մարտունի քաղաքում:

Արմենական-ՌԱԿ «Երիտասարդ Արմենական» ակումբի վարչություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մշակույթի գործչի շահերն ու... ծիծակը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին մեկ տարվա ընթացքում լուրջ ուսումնասիրելով տեսահոլովակների շուկան՝ ԱԺ ամենաերիտասարդ պատգամավոր **Կարեն Վարդանյանը** նկատել է, թե CD-ների եւ DVD-ների ողջ շրջանառությունը Հայաստանում ապօրինի է, մեղմ ասած՝ իրավիճակն այս ոլորտում խայտառակ է. «Հեղինակային իրավունքի իրավատերերից գողանում են նրանց սեփականությունը, այդ շուկայում այսօր անարխիա է տիրում, ով ինչ ուզում, ինչ գնով ուզում՝ վաճառում է առանց իրավատերերի գիտության, իսկ ամենախայտառակ փաստն այն է, որ անգամ վաճառողները տեղյակ չեն, որ կա հեղինակային իրավունքի գաղափար... Լկտիությունն այն աստիճանի է հասել, որ ոստահարվում են հայ մշակույթի գործիչների հեղինակային իրավունքները, բոլորը տեսնում են դա, եւ ոչ ոք ոչինչ չի անում»: Ահա այս գնահատականները Կարեն Վարդանյանի այն խոսքից է, որը նա մի փոքր զգացմունքախառն երեկ ասում էր Ազգային ժողովում, իր օրենսդրական նախաձեռնությունը ներկայացնելիս, որն առկա վիճակը փոխելու ճիչ է, կարելի է ասել: Հեղինակային իրավունքի մասին օրենք, փաստորեն կա, բայց դրա գոյությունը գործին չի օգնում: Կարեն Վարդանյանն էլ կից այլ օրենսդրական փոփոխությունների փաթեթում ներկայացրել է «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով ձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ստեղծագործող մարդկանց շահերը պաշտպանել տեսաձայնային մագնիսական կրիչների վրա պարտադիր դրոշմավորմամբ, ասենք՝ դրոշմապիտակ կոցվի: Պարտադիր պետք է դրոշմավորվեն արվեստի եւ գրականության, մշակույթի, գիտության ոլորտների ստեղծագործողների, ֆիլմարտադրողների ստեղծագործությունների եւ կատարումների սկավառակները, այդ թվում՝ հնչյունագրեր եւ համակարգչային ծրագրեր պարունակողները:

Տես էջ 8

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:15 Page 1

ԱԶԳ

Ընթացիկ

Նախ ԼՂՀ կարգավիճակի հարցը, հետո միայն մնացյալը

Վաշինգտոն այցելության ժամանակ կայանալու է հանդիպում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի միջեւ: Այս հանդիպման առնչությամբ երեկ Ֆրանկֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆի հետ համատեղ ասուլիսում հավաստիացում է տվել նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

Ըստ նախարարի, վերջին շրջանում Հայաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ անցկացվել են բարձր մակարդակի կանոնավոր քաղաքական երկխոսություն, շփումներ երկու երկրների ղեկավարների միջեւ, եւ վստահություն կա, որ Հայաստանի եւ Միացյալ Նահանգների նախագահների գալիք հանդիպումը նոր որակ, նոր թափ կհաղորդի Հայաստան-ԱՄՆ երկկողմ հարաբերություններին:

Հայաստանի արտգործնախարարը հաստատել է հնչած հարցի միայն մեկ մասը, որ վերաբերում էր Օբամայի հետ հանդիպմանը: Հայաստանի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպման կազմակերպությամբ Նալբանդյանը հայտարարել է, թե ներկա դրությամբ այդպիսի պայմանավորվածություն ձեռք բերված չէ:

Ապրիլի 6-ին Հայաստանի առաջին նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսյանը** հանրահավաքում հայտարարել էր, թե Հայաստանի իշխանությունները եւ նախագահ Սերժ Սարգսյանը պատրաստ են սկսուած դրա վրա մատուցել 5 շրջանները, այսինքն՝ վերադարձնել Ադրբեջանին, անորոշ թողնելով մնացած սկզբունքային խնդիրների լուծումը, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Այս առնչությամբ Նալբանդյանը մեկնաբանել է, կրկնելով նախորդ օրվա ասուլիսում հնչեցրած խոսքերը, որ Հայաստանը, եռանախագահները, եւ բոլորն էլ հասկանում են, որ գլխավոր հիմնախնդիրը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման ճանաչման եւ այդ իրավունքի իրագործման հարցը:

«Առանց այդ հարցի լուծման մնացած հարցերը դժվար թե ինչ-որ լուծում գտնեն», ասել է նախարարը: Ինչ վերաբերում է աշխատանքային առաջարկներին, որոնք եռանախագահները ներկայացնում են բանակցությունների գործընթացում, այդպիսի առաջարկներ, ըստ Նալբանդյանի, բազմիցս արվել են, արվում են եւ կարվեն, եւ կողմերի միջեւ կքննարկվեն մինչեւ հնարավորություն լինի մոտեցնելու կողմերի դիրքորոշումները:

Վերջերս ներկայացվող շփոթը, թե գոյություն ունեն նորացված մադրիդյան սկզբունքներ, Նալբանդյանի խոսքով, չի համապատասխանում իրականությանը: Նալբանդյանը նշել է. «Այսօր բանակցությունների սեղանին են մադրիդյան փաստաթուղթը, մադրիդյան առաջարկները, որոնք ներկայացվել էին 2007 թ. նոյեմբերին, եւ դա բանակցությունների հիմքն է՝ մադրիդյան փաստաթուղթը, իսկ ներկայացվող աշխատանքային առաջարկների նման կարող են լինել բազմաթիվ այդպիսի առաջարկներ»:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ավստրալական երկակի ստանդարտներ

Ֆրանսիայում հրատարակվող Les Nouvelles d' Armenie ամսագիրը տեղեկացնում է, որ Ավստրալիայի արտգործնախարարությունը տեղի SBS ռադիոկայանի «Հայագք աշխարհին» հաղորդման ընթացքում հրապարակել է նամակ «1915-ի իրադարձությունների» վերաբերյալ: Նամակում, սակայն, չի օգտագործվել Ցեղասպանություն եզրույթը: «Ավստրալիան Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ճիշտ է համարում արձանագրություններում նշված պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը՝ երկու ժողովուրդների հարցերին անդրադառնալու համար», նշված է նամակում: Սակայն ավստրալացի պատգամավորներ **Մաֆսինա Մաֆֆյուն, Փոլ Ֆլետչերը** եւ **Ջո Հոֆֆեն** արդեն հայտարարել են, որ այդ կարծիքին չեն, իսկ Ավստրալիայի «Հայկական ազգային կոմիտեի» նախագահ **Վարանդ Մկրտիչյանը** այս կապակցությամբ հիշեցրել է, որ նույն Ավստրիալիայի վարչապետ Քեյվին Ռադը ժամանակին ուժեղ քննադատել էր Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին, որը հայտարարել էր, թե հրեական Հոլոքոստը «ուսումնասիրելու» համար պետք է ստեղծվի պատմաբանների հանձնաժողով: «Մենք պահանջում ենք Ավստրիալիայի կառավարությունից երկակի ստանդարտներ չբանեցնել մարդու իրավունքների քաղաքականության մեջ, որին, ի դեպ, հետամուտ է ավստրալական կառավարությունը», նշել է Մկրտիչյանը՝ հավելելով, որ Ավստրալիայի «Հայ ազգային կոմիտեի» պատրաստած հատուկ զեկուցագրում ընդգծվում է, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչված է աշխարհի մի շարք երկրների կողմից:

Հ. Ա.

Էրդողանը Սարգսյանի հետ Վաշինգտոնում երկկողմ հանդիպում է հայցել

1-ին էջից

Այս տեղեկատվությանը արտգործնախարարությունում տեղի ունեցած հանդիպումից հետո տարածված հաղորդագրությամբ ոչինչ չավելացվեց: Առանձնակի նոր տեղեկություններ չէր պարունակում նաեւ Հայաստանի նախագահի՝ թուրք բանագնացի հետ հանդիպման մասին հաղորդագրությունը: Վերջինի համաձայն, նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խնդրանքով երեկ ընդունել է նրա հատուկ բանագնաց Ֆերիդուն Սինիրլիօղլուին:

Բանագնացը Հայաստանի նախագահին է փոխանցել Թուրքիայի վարչապետի գրավոր եւ Թուրքիայի նախագահի ու արտգործնախարարի բանավոր ուղերձները: Նախագահ Սարգսյանն ասել է, որ Հայաստանը Թուրքիայից ակնկալում է գործնական քայլեր, որոնք առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման գործընթացում կերաբաշխվորեն վճռական տեղաշարժ:

Բանագնաց Սինիրլիօղլուն Հայաստանի նախագահին է փոխանցել թուրքական կողմի հավաստիացումները հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացում առաջընթաց ապահովելու պատրաստակամության վերաբերյալ: Իր բանագնացի միջոցով Թուրքիայի վարչապետը նախագահ Սերժ Սարգսյանի հետ երկկողմ հանդիպում է հայցել Վաշինգտոն կատարելիք այցի ընթացքում:

Երկկողմ հանդիպման հավանականության մեծացման համատեքստում հետաքրքրական է, որ Միացյալ Նահանգների պաշտոնական աղբյուրները եռակողմ, այսինքն՝ ԱՄՆ նախագահի մասնակցությամբ հանդիպման առնչությամբ հայտարարել են, թե այդպիսին նախատեսված չէ:

Սպիտակ տան մամուլի քարտուղար Ռոբերտ Գիբբսի ներկայացմամբ, ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով 47 երկրներ են մասնակցելու Վաշինգտոնում ապրիլի 12-13-ի ատոմային անվտանգության գագաթաժողովին, որի շրջանակներում նախատեսվում են մի շարք երկկողմ հանդիպումներ, այդ թվում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Երկկողմ հանդիպումների գլխավոր թեման լինելու են ատոմային անվտանգությունն ու ատոմային զենքի չտարածումը: Բացառություն է կազմելու Հայաստանի նախագահի հետ հանդիպման թեման: Սերժ Սարգսյանի հետ Օբաման պատրաստվում է քննարկել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Հայ-թուրքմենական տնտեսական հանձնաժողովի երկրորդ նիստը

Երեւանում մեկնարկել է հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստը: Նիստին ներկա են եղել հանձնաժողովի հայկական կողմի նախագահ, Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանն ու Թուրքմենստանի փոխվարչապետ Խդր Սաթարալիեւը:

Քննարկվող հարցերի շարքում էին Հայաստանի Հանրապետության եւ Թուրքմենստանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության, վառելիքաէներգետիկ, տրանսպորտի եւ կապի, առողջապահության, գյուղատնտեսության ոլորտներում, գիտության, կրթության եւ մշակութահումանիտար բնագավառներում համագործակցության հնարավորությունները:

Հայաստանի բնական պաշարների եւ էկոնոմիկայի նախարար **Արմեն Մովսիսյանը** նշեց, որ այս պահի դրությամբ Հայաստանի եւ Թուրքմենստանի միջեւ առեւտրաշրջանառությունը ցածր է: Ըստ նրա՝ աշխատանքներ են տարվում, որպեսզի երկու երկրների միջեւ ապրանքների ներկրումն ու արտահանումը ավելի էժան գներով իրականացվեն:

Հայաստանն ու Թուրքմենստանը հետաքրքրված են նաեւ էներգետիկ ոլորտում համագործակցության ծրագրերով՝ մասնավորապես թուրքմենական էժան գազն ու դրանից արտադրվող էժան էլեկտրաէներգիան Հայաստան ներմուծելու հնարավորությամբ:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Արմեն Մովսիսյանն անդրադարձավ նաեւ այն հարցին, թե ի՞նչ է սպասում հայ սպառողին, եթե առաջիկա տարիներին Հայաստանում գազի սակագինը հավասարվի միջազգային գներին:

«Իհարկե, դա ծանր է լինելու Հայաստանի համար: Բայց ի՞նչ պետք է անենք: Եթե պետությունը փորձի սուբսիդավորել՝ տնտեսությանը մեծ վնաս կհասցնենք: Մեր արտադրատեսակները միջազգային շուկայում մրցունակ լինել չեն կարող: Կառավարությունը պետք է մտածի, թե ինչպես պաշտպանի սոցիալապես անապահով խավին նման ցնցումներից», նշեց Արմեն Մովսիսյանը:

Ն. Մ.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎՏԱՆԳ

Սեւանին ճահճացում է սպառնում

«Սեւանի ափերը ջրի մակարդակի բարձրացմանը չնախապատրաստվեցին այնպես, ինչպես պետք էր՝ կանաչ տարածքներն ու աղբը մնում են ջրի տակ»: Մտահոգությունը «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ-ի նախագահ **Կարինե Դանիելյանինն է: Նրա բնութագրմամբ՝ ՀՀ նախագահին առընթեր Սեւանի հարցերով հանձնաժողովում այս կապակցությամբ մասնագետների կարծիքները հակասական են: Մի մասը կարծում է, որ ջրի տակ կանաչ տարածքների մնալը վտանգավոր է, մյուս մասը Սեւանի համար վտանգավոր չի համարում:**

«Մասնագետների մի մասը պնդում է, թե այդ կանաչ զանգվածը օրգանական նյութ է եւ կեր կդառնա լճի կենդանական աշխարհի համար, մյուս կողմն էլ կարծում է, որ կանաչ զանգվածը բավական շատ է եւ կնպաստի լճի ճահճացմանը: Խորհին համոզում ունեմ, որ ափերի ճահճացումը վտանգավոր է: Սեւանին կարող է սպառնալ ճահճացում, որովհետեւ ջրի մակարդակի բարձրացման հետեւանքով ափամերձ կանաչ տարածքներն ու շինությունները մնում են ջրի տակ, եւ հնարավոր է, որ լիճը չկարողանա ինքնամաքրման միջոցով հաղթահարել աղտոտվելու



եւ ճահճանալու վտանգը», ասում է Դանիելյանը:

Նրա ասելով՝ վերոնշյալ հանձնաժողովում ցանկանում են, որ համայնքները մաքրեն ափամերձ տարածքի ծառերը, գործընթացն էլ իսկի բնապահպանության նախարարությունը: «Լիճը բարձրանում է, եւ դա, իրոք, լավ է: Ընդ որում, ավելի արագ է բարձրանում, քան նախատեսված էր. անցյալ տարվա համեմատությամբ լճի մակարդակը բարձրացել է 30 սմ: Բայց եթե ափերը չնախապատրաստվեն, վատ կլինի: Ջրի տակ անցնելու վտանգին ենթարկվող շինություններ քանակը շատ մեծ է: Սկզբնական շրջանում հայտարարվում էր, որ դրանից 460-ն է օրինական, հետո այդ թիվը նվազեց՝ հասնելով 200-ի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայաստանում կան քաղբանտարկյալներ»

Այդ մասին ապրիլի 7-ին հայտարարել է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ **Սուզի Բելասենը**:

«Ես հանդիպել եմ հանրապետության նախագահին շատ պարզ նպատակով: Եվ իմ ուղերձն էր՝ քաղաքական բանտարկյալների ազատ արձակումը, 2008-ի մարտի 1-ի իրադարձությունների հետեւանքով զոհվածների մահվան հանգամանքների հետաքննությունը, խոսքի ազատությունն ու արդարադատության իրականացումը, այս համատեքստում նաեւ անազատության մեջ գտնվողների նկատմամբ խոշտանգումների բացառումը: Ե՛վ հանրապետության նախագահի, ե՛ւ ընդդիմության առաջնորդ Տեր-Պետրոսյանի հետ մեր հանդիպումների նպատակը քաղաքական բանտարկյալների խնդիրն էր», «Ազատություն» ռադիոկայանի զրույցում նշել է Բելասենը եւ հավելել. «Քաղբանտարկյալների առկայությունն անվիճելի է, ես ինքս եմ նրանց այցելել բանտերում, հանդիպել նրանց ընտանիքներին: Թե քանիսն են՝ հստակ չեմ կարող ասել, բայց նրանք գոյություն ունեն»:

FIDH-ի նախագահը պարզաբանել է նաեւ, որ Հայ ազգային կոնգրեսի՝ նախորդ օրը կայացած հանրահավաքին միանալը եւ ամբիոնից ելույթ ունենալը եւս նույն նպատակն էին հետապնդում. իրենք հանրահավաքին միացել են ոչ թե նրա համար, որ դա ընդդիմության հանրահավաքն էր, այլ որովհետեւ քաղբանտարկյալների ազատ արձակման պահանջը հանրահավաքի առանցքային թեման էր:

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:05 Page 1

ԱԶԳ

Անցուդարձ

Բջջային կապի թափանցման մակարդակով Հայաստանը 3-րդն է ԱՊՀ-ում

Հեռահաղորդակցության ավիրված «կլոր սեղանի» ժամանակ կարեւորվեց նաեւ կիբեռանվտանգության հարցը

Հեռահաղորդակցության խնդիրներին նվիրված «կլոր սեղան» երեկ տեղի ունեցավ Երեւանում, որին մասնակցում էին տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանը,** Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) նախագահ **Համադուն Տուրեն**, էկոնոմիկայի նախարար **Ներսես Երիցյանը**, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ **Ռոբերտ Նազարյանը**, ոլորտը ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչները:

Դիմելով Հեռահաղորդակցության միջազգային միության նախագահին, Մանուկ Վարդանյանը մատնանշեց երեք ուղղություններ՝ կադրերի վերապատրաստում, եթերի մոնիտորինգի համակարգ եւ թվայնացման ամբողջական ներդրում, որտեղ ակնկալվում է ՀՄՄ-ի աջակցությունը:

Համադուն Տուրեն նախ տեղեկացրեց, որ միությունը հնագույն միջազգային կազմակերպություն է եւ այս տարի նշելու է իր հիմնադրման 145-ամյակը, հիմնել խարհում վերջնաժամկետ է նշել 2015-ը, Համադուն Տուրեն խոստացավ ամեն ինչ անել, որ Հայաստանում նույնպես թվայնացումն այդ ժամկետում կատարվի:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանն այն տեսակետը հայտնեց, որ 2006-ից հեռահաղորդակցությունը լուրջ զարգացում ապրեց, որը մինչ այդ հնարավոր չէր նախկինում կատարված սխալի՝ «Արմենտելին» մենաշնորհ տալու պատճառով: Նա նաեւ նշեց, որ այս ոլորտում դեռ անելիքներ շատ կան եւ նախարարության, ՀՄՄ-ի եւ ոլորտի ընկերությունների հետ կփորձեն դրանք կատարել: Իսկ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը տեղեկացրեց, որ կառավարության կողմից իրականացվելու է էլեկտրոնային հասարակարգի ստեղծման ծրագիրը, եւ նույնպես կարեւորեց կիբեռանվտանգության հարցերը:

Ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները ներկայացրեց Ջեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի նախագահ **Բագրատ Ենգիբարյանը**: Նա նշեց, որ խնդիր է դրված 10 տարվա ընթացքում հասնել նրան, որ ապահովվի ինտերնետի 100 տոկոս թափանցում, համակարգիչների թվի 80 տոկոս ապահովվածություն: Մեծ ներդրումներ են նախատեսվում համակարգչային անգրագիտությունը վերացնելու համար: Ոլորտի շրջանառությունը 10 տարվա ընթացքում նախատեսվում է հասցնել 1 մլրդ դոլարի, իսկ մասնագետների թիվը՝ 20 հազարի: Բագրատ Ենգիբարյանը տեղեկացրեց, որ Հայաստանից ծրագրային արտադրանքի 66 տոկոսը ներկայումս արտահանվում է ԱՄՆ, մնացածը՝ Եվրոպա եւ Ռուսաստան: Անցյալ տարի արտահանվել են 130 մլն դոլարի ծրագրեր: Հայաստանում օտարերկրյա ընկերություններ շատ կան, այդ թվում՝ հայտնի ընկերություններ: Ներդրումներն այս ոլորտում 90 տոկոսով պայմանավորված են հայկական սփյուռքի գործոնով, բայց, ըստ Բագրատ Ենգիբարյանի, դրանով չեն սահմանափակվելու եւ նոր գործընկեր են փնտրելու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բացելով «կլոր սեղանը», Մանուկ Վարդանյանը ներկայացրեց հեռահաղորդակցության ոլորտի վերջին զարգացումները եւ ներկա իրավիճակը: Մասնավորապես, նախարարը նշեց բջջային կապի ազատականացման արդյունքում երեք օպերատորների գործունեությունը, ինչի շնորհիվ նվազել են սակագները, ավելացել ծառայությունները եւ մեծացել ծածկույթը: Ըստ օպերատորների ներկայացրած տվյալների, Հայաստանում այսօր բջջային կապի շուրջ 3 մլն բաժանորդներ կան: Ինտերնետ կապի զարգացման մասին խոսելով, Մանուկ Վարդանյանը հայտնեց, որ մի քանի տարի առաջ ինտերնետից օգտվողների թիվ էր նշվում 200 հազարը, այժմ՝ 1 մլն 200 հազարը: Նկատի ունենալով ոլորտի նման զարգացումը, նա ընդգծեց կիբեռանվտանգության խնդրի կարեւորությունը, տեղեկացնելով, որ այդ նպատակով մշակվել է եւ կյանքի է կոչվում տեղեկատվական անվտանգության հայեցակարգը:

Բջջային կապի ոլորտում դեռ անելիքներ շատ կան եւ նախարարության, ՀՄՄ-ի եւ ոլորտի ընկերությունների հետ կփորձեն դրանք կատարել: Իսկ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը տեղեկացրեց, որ կառավարության կողմից իրականացվելու է էլեկտրոնային հասարակարգի ստեղծման ծրագիրը, եւ նույնպես կարեւորեց կիբեռանվտանգության հարցերը:

Ոլորտի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները ներկայացրեց Ջեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի նախագահ **Բագրատ Ենգիբարյանը**: Նա նշեց, որ խնդիր է դրված 10 տարվա ընթացքում հասնել նրան, որ ապահովվի ինտերնետի 100 տոկոս թափանցում, համակարգիչների թվի 80 տոկոս ապահովվածություն: Մեծ ներդրումներ են նախատեսվում համակարգչային անգրագիտությունը վերացնելու համար: Ոլորտի շրջանառությունը 10 տարվա ընթացքում նախատեսվում է հասցնել 1 մլրդ դոլարի, իսկ մասնագետների թիվը՝ 20 հազարի: Բագրատ Ենգիբարյանը տեղեկացրեց, որ Հայաստանից ծրագրային արտադրանքի 66 տոկոսը ներկայումս արտահանվում է ԱՄՆ, մնացածը՝ Եվրոպա եւ Ռուսաստան: Անցյալ տարի արտահանվել են 130 մլն դոլարի ծրագրեր: Հայաստանում օտարերկրյա ընկերություններ շատ կան, այդ թվում՝ հայտնի ընկերություններ: Ներդրումներն այս ոլորտում 90 տոկոսով պայմանավորված են հայկական սփյուռքի գործոնով, բայց, ըստ Բագրատ Ենգիբարյանի, դրանով չեն սահմանափակվելու եւ նոր գործընկեր են փնտրելու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Դեղերի կեղծումն այսօր դարձել է գլոբալ խնդիր

Երեկ առողջության միջազգային օրն էր: Այդ կապակցությամբ «Դե ֆակտո» մամուլի ակումբում երեկ լրագրողների հետ հանդիպեց ՀՀ դեղերի փորձագիտական կենտրոնի տնօրեն Էմիլ Գաբրիելյանը:

«Առողջության մասին պետք է մտածել հենց առողջ ժամանակ: Ովքեր առողջ են, առողջության պահպանման մասին չեն մտածում, սկսում են առողջությունը գնահատել այն ժամանակ, երբ առողջությունն արդեն կորցնում են», նշեց Էմիլ Գաբրիելյանը:

Դեղերն այն կարեւոր գործոններն են, որոնք օգնում են պահպանել առողջությունն ու պայքարել հիվանդությունների դեմ:

Բանախոսը նկատում է, որ ամենաբարի հայտնագործությունն անգամ երկսայր է լինում՝ մի կողմից հրաշքներ է գործում, մյուս կողմից կարող է չարիք դառնալ մարդկության համար, ուստի դեղերի հսկողությունը պետք է ուժեղացվի:

Դեղերի կեղծումն այսօր դարձել է համաշխարհային խնդիր: Ամբողջ աշխարհում կեղծվում է դեղերի 6-60%-ը: Միայն Եվրոպայում կեղծվում է դեղերի շուրջ 10%-ը:

«Այս ամսի 13-ին ես հրավիրված եմ Բազել, որտեղ առաջին անգամ ընդունվելու է կեղծված դեղերի շրջանառության վերաբերյալ հատուկ կոնվենցիա, որի մեջ կարող են ընդգրկվել բոլոր երկրները», տեղեկացնում է Էմիլ Գաբրիելյանը:

Ամբողջ աշխարհում հատկապես կեղծվում են սպառման մեծ շուկա ունեցող դեղերը: Թույլ զարգացած կամ զարգացող երկրներում շատ են կեղծվում հակաբիոտիկները, իսկ զարգացած երկրներում՝ հորմոնալ դեղամիջոցները: Հայաստանում միայն այս տարի փորձագիտական կենտրոնը մերժել է շուրջ 70 դեղ: Հիմա մեր երկրում գրանցված է շուրջ 3700 դեղ, որոնք բոլորն էլ անցել են փորձաքննություն:

Ըստ բանախոսի՝ տեղական արտադրության դեղերը կազմում են շրջանառվող դեղերի ընդամենը 5-7 տոկոսը, այսինքն՝ շրջանառվում են հիմնականում ներկրվող դեղերը:

«Ազգի» հարցին, թե ինչպե՞ս է կարգավորվում կենսաակտիվ սննդային հավելումների շրջանառությունը, բանախոսը պատասխանեց. «Դա մեր լրջագույն խնդիրներից է, կենսաակտիվ հավելումների շրջանառությունը դեռ չի կարգավորվում:

Սրանք եւս պետք է ենթարկվեն փորձաքննության, որովհետեւ վերջին տարիներին կենսաակտիվ հավելումների հետ կապված ահավոր փաստեր ենք ունենում: Օրինակ՝ կենսաակտիվ մի հավելում պրոպագանդվում էր հեռուստատեսությամբ որպես հրաշք, որը տղամարդուն իբր դարձնում է հերկուլես՝ սեռական պոտենցիայի իմաստով: Մենք հաջորդ օրը ստուգեցինք այդ հավելումը եւ պարզվեց, որ այն կարող է առաջացնել նրանց հանկարծամահություն, ովքեր օգտագործում են նիտրատներ (նիտրոգլիցերին)»:

Կենսաակտիվ սննդային հավելումները հիմնականում լինում են հաբերի տեսքով, վաճառվում են դեղատներում կամ տարածվում ցանցային մարկետինգի աշխատողների միջոցով, իսկ վերջիններս կարող են լինել հացթուխներ, բանվորներ, մանկավարժներ եւ այլն: Կենսաակտիվ հավելումները չեն բուժում, սակայն կարող են կանխել առողջական որեւէ խնդրի հետագա սրումը, հետեւապես այս հավելումները պետք է ենթարկվեն փորձաքննության եւ նշանակվեն միայն բժիշկների կողմից, սակայն Հայաստանում սրանց շրջանառությունը դեռ ոչ մի օրենքով չի կարգավորվում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Աշնանային զորակոչի ժամանակ տղաների 30 տոկոսը առողջական լուրջ խնդիրներ ուներ

«Բանակի գլխավոր խնդիրն այսօրվա զինակոչիկների առողջական վիճակն է:

1990 թ. եւ հետո ծնված տղաները առողջական լուրջ խնդիրներ ունեն: Նրանց մանկությունը համընկել է 90-ականների մութ եւ ցուրտ ժամանակահատվածին, վատ կերակուր, ցուրտ սենյակներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողել տղաների առողջության վրա»:

Մտահոգությունը «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության նախագահ **Գրետա Միրզոյանինն** է: Կազմակերպությունը տարբեր զինկոմիսարիատներում մոնիտորինգ են անցկացրել եւ պարզել, որ հիմնական հիվանդությունները կապված են ողնաշարի, տեսողության, ուրցի եւ արյան հետ:

«Բանակը զինվորների համապատասխան ֆանակ պետք է ունենա, բայց դա դժվար է ապահովել, որովհետեւ այսօր առողջ երեխաների թիվը շատ փիչ է: Եղել եմ զինկոմիսարիատում, որտեղ զինակոչի եկած 38 երիտասարդից միայն 7-ն էին առողջ: Աշնանային զորակոչի ժամանակ երիտասարդների 30%-ը հիվանդ էր»:

Եթե երիտասարդը հիվանդ է, բժիշկները նշանակում են տարկետում, լուրջ հիվանդության ժամանակ սահմանում բուժում երեք տարով, որը վճարում է պետությունը: «Այնպես չի լինում, որ զինկոմիսարիատում տեղյակ են, որ երեխան հիվանդ է ու նրան տանեն բանակ: Իհարկե, լինում են նաեւ տխուր դեպքեր, երբ նրանք անտեսում են հիվանդությունն ու տանում բանակ: Զինկոմիսարիատի անպատասխանատու եւ փնթի վերաբերմունքի պատճառով նման մի հիվանդ տղա բանակում մահացավ, պարզվեց, որ տղան մահացել է ուրցի նոպայից»:

Այդ կապակցությամբ նա խորհուրդ է տալիս ծնողներին լինել ավելի ուշադիր, տղաներին տարվա ընթացքում գոնե մեկ անգամ տանել հիվանդանոց եւ բուժզննում անցկացնել:

«Հաճախ հիվանդ երեխային բանակ են տանում, որովհետեւ ծնողներն անփույթ են: Մի անգամ մեր կազմակերպություն եկավ մի տղա, որը բացարձակապես չէր լսում, բայց հաշմանդամության թուղթ չուներ, եւ նրան տանում էին բանակ: Ստիպեցինք, որ անցկացնեն բուժզննում, եւ նրան բանակից ազատեցինք: Ծնողները պետք է մոռանան ամեն ինչ, իրենց գիտակցության մեջ պետք է լինի միայն այն միտքը, որ որդի են ուղարկում բանակ, պետք է կարողանան պաշտպանել իրենց իրավունքները»:

Գրետա Միրզոյանը նկատում է, որ այսօր բանակում սննդի եւ մարդության հետ կապված խնդիրներ չկան: «Պահեստում ամեն ինչ էլ կա: Նրանց կարագ են տալիս, մսով ճաշ, ձու: Միակ խնդիրն այն է, որ մրգեր ու բանջարեղեն փիչ են տալիս, ինչը շատ կարեւոր է առողջության համար»:

«Արդյոք պահեստի սնունդը հասնո՞ւմ է զինվորներին», **«Ազգի»** հարցին Միրզոյանը դրական պատասխան տվեց:

Մինչդեռ հաճախ են լինում դեպքեր, երբ որեւէ հիվանդանոց կամ դպրոց են այցելում մարդիկ, որ համեմատաբար էժան գնով վաճառում են կարագ կամ լվացքի փոշի: Հետո պարզվում է, որ մթերքը գողացել են բանակից: Եթե պահեստից սնունդ ու հիգիենայի պարագաներ են գողանում, ապա դրանք ինչպե՞ս կհասնեն զինվորներին: Այս հարցին թերեւս պետք է պատասխանեն համապատասխան գերատեսչության պատասխանատուները: ՀԿ ղեկավարն էլ չի ժխտում, որ բանակում գողության դեպքեր լինում են: «Բանակը մեր հասարակության հայելին է: Այնտեղ ծեծում են՝ հասարակության մեջ էլ են ծեծում, բանակում գողանում են, այստեղ էլ են գողանում: Իհարկե, բանակի կյանքը տարբերվում է մեր կյանքից, բայց կարգը նույնն է: Պետք է փաստեմ, որ գողությունը բոլոր երկրների բանակներում էլ կատարվում է»:

Միրզոյանի դժգոհությունները հիմնականում վերաբերում են սպայական կազմին: Նրա բնորոշմամբ՝ սպայական կազմն այնքան դաստիարակված չէ, որ գիտակցի՝ չի կարելի ձեռք բարձրացնել ուրիշի վրա ու ծեծել: «Ծեծելու դեպքերը շատ են: Զինակոչիկներն էլ հոգեպես անպատրաստ են գալիս բանակ ու հաճախ չեն գիտակցում, թե ուր են ընկել: Այդ պատճառով մի քանի տարի առաջ մանկավարժական համալսարանում բացվել է զինվորական հոգեբանության ֆակուլտետը, որի շրջանավարտները պետք է կարողանան հոգեբանության հետ կապված հարցեր լուծել»:

Բանակում տիրող մեկ այլ արատավոր երեւույթն էլ վերաբերում է աղանդներին: Պարզվում է՝ աղանդավորները հաճախ են թափանցում բանակ: «Դեպքերը շատ են, երբ Եհովայի վկա աղանդի հետեւորդները ծառայում են բանակում: Դա հատուկ է արվում, նրանք թաքցնում են, որ աղանդավոր են, զորակոչվում են բանակ եւ այնտեղ զբաղվում հոգեորությամբ»:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:05 Page 1

Ցանկանում են լավ բան անել, ստացվում է՝ ինչպես միշտ

Հայ հանրության առօրյայում անցանկալի իրողություններն ավելին են, քանզի ինչ-որ տեղ ինչ-որ բան այնպես չի արվում

Վերնագրի արտահայտությունը բազմիցս հաստատվել է հեխմորհրդային երկրների առօրյայում: Վերափոխումներ իրականացնող ղեկավարներն ամեն օր փորձում են քաղաքական ու տնտեսական միջոցներով բարելավել իրենց հասարակության կենցաղն ու աղրելակերպը, սակայն նրանց բարի ցանկությունները դաժան խաղ են դառնում սեփական քաղաքացիների համար: Հողի սեփականաշնորհումը ծնեց «գյուղացուն հողին հանձնեցին» արտահայտությունը, տրանսպորտի մասնավորեցումը հանգեցրեց գծատեր պատգամավորների խավի կազմավորմանը, առեւտուրը դարձավ մենաշնորհատերերի գործելադաշտ, եւ այսպես շարունակ:

Ասվածի պարզ օրինակ է գազի նոր սակագնի հետ կապված պատմությունը: ՀՀ-ում ընտրվի պաշտոնի յուրաքանչյուր թեկնածու անցած տարիներին խոստացել է լուծել առանձին վերցրած բնակարանից սկսած մինչեւ ողջ համայնքի գազաֆիկացումը: Հիանալի է, նշում է մեզնից յուրաքանչյուրը: Եվ խնդրեմ. վերջին տարիներին երկնագույն վառելիքն իրենց բնակարաններում ունեցան 600 հազար տնտեսություններ, որոնցից ցուցանիշ չի եղել անգամ խորհրդային տարիներին: Գազատար խողովակները հասցվել են անգամ բարձր լեռնային ու հեռավոր սահմանային հարյուրավոր գյուղական համայնքներ: Բայց ա՜յ թեզ բան. խողովակներում հայտնված գազը տներից մի 40-50 մետր հեռավորության վրա է, իսկ, ասենք, մեր տասնյակ հազարավոր գյուղաբնակներն այն իրենց խոհանոցներում ու ջերմակաթսաներում ունենալու ցանկությունը չեն ցուցաբերում: Ըստ լրատվամիջոցների բազմաթիվ հաղորդումների՝ կան հարյուրավոր տնտեսություններ ունեցող համայնքներ, ուր նրանց հազիվ մեկ տասնյակն է միացել գազատարին, այն էլ գազի այնպիսի սահմանափակ օգտագործմամբ, որ չարժե հաշվիչի կողմը նայել: Այս երեւույթն արձանագրվում է ՀՀ ողջ տարածքում, որը գազագործների հաշվետվություններում արտացոլվում է գազի օգտագործման 20 տոկոս նվազման ցուցանիշով: Տողերիս հեղինակը հեռու է «Հայռուսգազարդ»-ի պաշտպանի դեր ստանձնելուց, բայց անկարող է չհարցնել՝ ինչ անի հսկայածավալ ափխաստանքներով միլիարդավոր դրամների ծախսեր իրականացրած ձեռնարկությունը: Անշուշտ, պաշտպանել իր շահերը, որը տվյալ պարագայում արտահայտվում է իր աղրանքի դիմաց իր գինը սահմանելու միջոցով: Անշուշտ կարելի է չհամաձայնել նման մոտեցմանը, ընդվզել ու բողոքել, գուցե բոյկոտել, որը թերեւս ձեռնարկությունը սնանկացման հասցնի: Այս սցենարը ձեռնտու չէ անգամ մի կերպ վճարող խավին եւ, իհարկե, իշխանությանը, քանզի վերջինս հանրության վճարունակ հատվածի գազօգտագործումից առաջացած մուծումներով զգալի հարկեր ու տուրքեր է հավաքում, առանց որոնց ինքը գոյատեւել չի կարող: Այնպես որ նոպատակը լավ բան անելն է՝ երկրի գազաֆիկացումը, իսկ թե ինչ ստացվեց, տեսնում ենք բոլորս: Ուզենք թե չուզենք նայում ենք գյուղաբնակների կողմը, քանզի այստեղ է գազագործների կրած հիմնական վնասը:

Գյուղին պետք է օգնել ամեն գնով: Այս լավ բան անելու ցանկությանն է ուղղված վերջերս հայտարարված գյուղական տարածքներում 3 խոշոր մեքենատրակտորային կայանների ստեղծման խոստումը: Այո, հողի վարն այսօր թանկ հաճույք է, գյուղացին անվերջ տրտնջում ու բողոքում է այն իրականացնելու խնդրում ունեցած դժվարություններից: Ողջունելի է վիճակը թեթեւացնելու յուրաքանչյուր քայլ, այդ թվում՝ երիտասարդ նախարարի՝ ՄՏԿ-ներ հիմնելու որոշումը, եթե, իհարկե, այն չի տրվել մոտակա տարիներին դրանք լուծարելու արդյունքով: Իսկ նման հավանականություն կա, քանզի հողօգտագործողն այսօր շատ ավելի հեշտ փոխըմբռնման հասնում է իր համագյուղացի մեխանիզատորի հետ, երբեմն պարտք մնալու գնով: Փոխարենը նրան առաջարկվելու է որոշակի բարդ մի գործընթաց, որից նա դժվար թե օգտվի: Այսուհանդերձ ես կանխավ ներողություն եմ խնդրում հողօգտագործողների այն մասի կարծիքը նշելու համար, ովքեր հայտնվել են թերահավատների թվում: Ինչ իմանաս. «գուցե մերն ուրիշ է»-ն իրոք ուրիշ է:

Նորոյա Հայաստանում որ կողմ շրջվես ու ինչ ուղղությամբ շարժվես, դեմ ես առնում գյուղական աղքատության, որն էլ բազմաբնույթ հոգսեր ու դժվարություններ է ստեղծում ողջ հանրության համար, վտանգում երկրի պարենային ապահովությունն ու անվտանգությունը, հասարակության համաչափ ընթացքը: Տարիներ առաջ տարբեր մարզերում գերժամանակակից սպանդանոցներ հիմնվեցին, որոնցում մինչ օրս անգամ մեկ կենդանի չի մորթվել, քանզի դրանց անձնակազմերի ծախսերի հատուցումն ուղղակի անդրադառնում է մսի գնի վրա: Հիմա էլ խոսվում է գյուղական համայնքներում 30-40 տնտեսություններից բաղկացած կոոպերացիաների ստեղծման մասին, երբ ցանկալի է դրանց արդյունավետության մասին խոսել մի քանի դրական օրինակներ ունենալու պարագայում: Այնպես որ լավ բան անելու տեսական ու անգամ գործնական բնույթի գործընթացները մեզանում դեռ կշարունակվեն, քանի դեռ հայ հողի մշակի աշխատանքը, առանց այն էլ ծանր ու տանջալից, չի դառնա արդյունավետ ու եկամտաբեր: Երկիր մոլորակի չորս կողմերում այն ձեռք է բերվում հիմնական մեկ գործիքի օգնությամբ. երկրի հողային կարողունակությունը հնարավորինս օգտագործվում է առավելագույն արդյունավետություն ապահովող մշակաբույսի աճեցման նպատակով, որն էլ որպես անասնակեր օգտագործելով երաշխավորվում է տվյալ հանրության կենդանական ծագման սննդատեսակների՝ կաթնամսամթերքների բավարար արտադրությունն ու սպառումը: Մշակաբույսն այդ համարվում է եգիպտացորենի հատիկը, որի հարյուր միլիոնավոր տոննաներ արտադրում են սուրճի ու բրնձի երկրներ Բրազիլիան ու Չինաստանը, որոնք ինքնաբավ դառնալուց բացի այսօր հեղեղում են նաեւ հայկական շուկան: Եգիպտացորենի միլիոնավոր տոննաներ հատիկ են արտադրում ԱՄՆ-ում ու Եվրոպայում, Հարավաֆրիկյան հանրապետությունում ու Ավստրալիայում. այսօր ցորենի համաշխարհային արտադրությունը կազմում է 600 մլն տոննա, եգիպտացորենի հատիկինը՝ 800 մլն տոննա: Հավի մսի արտադրությունն ի՞նչ է, որ չենք կարողանում իրականացնել, որի ներկրումը հասնում է 35 հազար տոննայի, երբ սեփականը հազիվ դրա 10 տոկոսն է, այն էլ տասնյակ հազարավոր տոննաների հասնող եգիպտացորենի հատիկի ներկրման արդյունքում: Իսկ հայ գյուղացուն օգնել մշակելու այս մշակաբույսը՝ ոչ ոք լավ գործ համարել չի պատրաստվում: Այստեղ արժե հիշել, որ 2007 թ. եւ 2008-ի գարնանային շրջանում այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը որոշակի քայլեր ձեռնարկեց. պետբյուջեի հաշվին ձեռք բերվեց ու գյուղացիական տնտեսություններին բաշխվեց եգիպտացորենի սերմացու, մշակաբույսի աճեցումը խրախուսվեց սուբսիդավորմամբ, քայլեր ձեռնարկվեցին համապատասխան տեխնիկայի հայթայթման ուղղությամբ: Հետագայում այս լավ աշխատանքը տարօրինակորեն մոռացվեց ու մերժվեց: Երբ Հայաստանի Հանրապետությունում լուծվի պարզից էլ պարզ այս խնդիրը, որը գյուղացու աշխատանքի արդյունավետության ու եկամտաբերության հիմնական երաշխիքն է, գյուղաբնակը տան գազաֆիկացումն էլ կիրականացնի, իր գյուղտեխնիկան ձեռք կբերի, անասունն էլ թերեւս սպանդանոցում մորթի, հետն էլ քաղաքաբնակին եվրոդուռ ու լուսամուտ պատվիրի, հրավիրի լոգարանն ու խոհանոցը սալիկապատելու, ինչ իմանաս՝ երեխաների համար էլ պարուսույց փնտրի: Այնժամ բարի ցանկություններն էլ տխուր վերջաբանի տեսքով չեն ավարտվի, ինչպես ցավալիորեն մինչ օրս արձանագրվողներն են:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
2006-2008 թթ. ՀՀ գյուղնախարարի խորհրդական

Փոփոխություններ՝ ի շահ ո՞ւմ

Աշխատանքային օրենսգիրքը՝ գործատուի «հագով»

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների՝ 2009 թ. ապրիլի 27-ին ՀՀ կառավարությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան եւ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը կնքեցին հանրապետական կոլեկտիվ պայմանագիր, որով կողմերը պարտավորվում են ապահովել սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կայուն զարգացումը: Սակայն դեռ գործնական կիրառում չգտած պայմանագրի «խոփը հանդիպել է քարի»: Բանն այն է, որ 2009 թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայում առկա առանձին խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը, ընդունեց ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին որոշում, որոնք պետք է պարզեցնեն եւ հստակեցնեն աշխատանքային հարաբերությունների ծագման, կարգավորման մեխանիզմները, համապատասխանեցնելով դրանք ՀՀ սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով՝ ԱՄԿ կոնվենցիաներով եւ վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված առանձին դրույթների պահանջներին: Աշխատանքային օրենսգրքի 266 հոդվածներից 109-ում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծերի փաթեթը 2010 թ. հունվարի 19-ին քննարկվել է ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում: Քննարկմանը ներկա արհմիությունների կոնֆեդերացիայի եւ գործատուների միության անդամները, կարեւորելով որոշ փոփոխություններ, այնուհանդերձ որոշեցին նախքան ԱԺ-ի կողմից օրինագծի հաստատումը իրենց կառույցներում քննարկել եւ հանձնաժողովին ներկայացնել վիճահարույց հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումները: Հայաստանի ՀԱՄԿ-ի նախագահության եւ խորհրդի, ինչպես նաեւ ճյուղային հանրապետական միություններում ընթացող բուռն քննարկումներով հավանության չարժանացած փոփոխություններից են հատկապես արտաժամյա եւ գիշերային աշխատանքի վարձատրության չափը սահմանող առաջարկը, որը գործող օրենքով սահմանված դրույքաչափը նվազեցնում է՝ 1,5-ի փոխարեն սահմանելով մի դեպքում 50, մեկ այլ դեպքում 30 տոկոս հավելում: Կառավարության մեկ այլ առաջարկով գործատուի եւ աշխատողի միջեւ կնքվում է գրավոր եւ բանավոր աշխատանքային պայմանագիր, ընդ որում գրավոր պայմանագիրը նոպատակ ունի նվազեցնել աշխատանքի ընդունման ժամանակ տարվող փաստաթղթային ձեւակերպումները: Նախագծի հեղինակների մեկ այլ առաջարկով կազմակերպություններում աշխատողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար ընտրվի ներկայացուցչական մարմնին տրվում են արհմիություններին հավասար իրավունքներ: ՀԱՄԿ-ի մի շարք ճյուղային միությունների նախագահների տեսանկյունից վերոհիշյալ եւ մյուս վիճահարույց հոդվածներն ուղղված են ոչ այնքան աշխատավորների, որքան գործատուների շահերի պաշտպանությանը: Պարզ է, որ կառավարությունը նախ եւ առաջ օրենքը պետք է «ձեւեր» բիզնես միջավայրի բարելավման հայեցակարգի «հագով», հուսալով, որ աշխատողգործատու հարաբերություններն ընթացքում ինքն-իրեն կկարգավորվեն:

- Գործող օրենսգիրքը որոշ առումներով պահպանում է գործատու-աշխատող հարաբերությունների բալանսը, այնինչ փոփոխությունները առավել նպաստավոր են լինելու գործատուի համար,-ասում է ՀԱՄԿ-ի Առողջապահության աշխատողների ճյուղային հանրապետական միության նախագահ **Գայանե Արմաղանովա**ն: -Հասկանալի է, ճգնաժամի հաղթահարման համար կառավարությունը փորձում է բարելավել տնտեսությունը, սակայն պարզից էլ պարզ է, որ փոփոխություններն արվել են ի նպաստ գործատուների: Ի՞նչ է, տնտեսության բարելավման գործում աշխատողները ներդրում չունե՞ն, չէ՞ որ նույն աշխատողն է նպաստում բիզնեսի ծաղկմանը:

Այս փոփոխությունները մտահոգիչ են նաեւ ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ **Գառնիկ Վաղարշակյանի** համար: Նրա համոզմամբ՝ բուհերում կենտրոնացված մտավոր եւ երիտասարդ ուժը վաղվա գործարարն է, գիտնականն ու ճարտարապետն է, շինարարն ու բժիշկն է, ում իրավունքները պետք է պաշտպանված լինեն դեռ ուսանողական նստարանից: «Կարծում եմ, որ այս փոփոխությունները հանրապետությունում առկա բեւեռվածության պայմաններում կարող են հանգեցնել լարվածության եւ պոռթկումների, քանի որ նշված օրինագծում կառավարությունը շահագրգիռ մոտեցում ունի՝ որքան հնարավոր է աշխատավոր մարդու սոցիալական շահերը դնել ավելի անպաշտպան վիճակում»: Մասնավորապես անվստահություն է ներշնչում գործատուի եւ աշխատողի միջեւ պայմանագրի կնքման **բանավոր** տարբերակը սահմանող առաջարկը, քանի որ, ինչպես Մշակույթի աշխատողների ճյուղային հանրապետական միության նախագահ **Ժաննա Թորոսյանն** է ասում. «Շատ հաճախ գրավոր պայմանագիրը լիովին չի գործում, ուր մնաց՝ բանավորը: Պարզ չէ՞, որ գործատուն պայմանագիր կկնքի միայն այն աշխատողի հետ, ով անխոս կընդունի իր առաջարկած պայմանները: Դա արդեն իրավունքի խախտում է: Մենք կարեւորում ենք գրավոր պայմանագրի առկայությունը, այլապես գործատուն կամայականություն կդրսեւորի որեւէ պարագայում»: Տիկին Թորոսյանը գտնում է, որ անճշտություններ կան նաեւ հարկադիր աշխատանքին վերաբերող հոդվածի լրամշակված տարբերակում, որն ինքնին ԱՄԿ-ի կոնվենցիայի եւ ՀՀ սահմանադրության խախտում է:

Հարկադիր աշխատանքի եւ վճարման խնդիրները մտահոգում են նաեւ Քաջարանի, Ղափանի, Ագարակի մեսալուրգիական ձեռնարկությունների, ինչպես նաեւ «Ռուսալմենալ» ՓԲԸ-ի աշխատավորներին, ովքեր համոզված են, որ օրենքն էլ ավելի կընդլայնի սեփականատիրոջ իրավունքները:

- Քննարկումների ժամանակ ինձ հարցնում են, թե արհմիությունն ինչպե՞ս է պաշտպանելու իրենց իրավունքները, երբ նախագծում հանված է անգամ «արհմիություն» բառը: Այդ դեպքում ո՞րն է արհմիության դերը,-ասում է Լեռնագործների, մեսալուրգների եւ ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ **Անաստաս Փահլեւանյանը**:

Հայաստանի Պետհիմնարկների միության նախագահ **Ելենա Հակոբովայի** կարծիքով, կառավարությունը արհմիությունների գործունեությունը սվերեալու, նրանց անգործության մատնելու քաղաքականություն է վարում: Այս եւ մյուս տեսակետներին է նաեւ Մեքենաշինարարների եւ սարքաշինարարների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության փոխնախագահ **Ռիգոլետո Կարապետյանը:** «Էլեկտրաարհմիություն» ճյուղային հանրապետական միության նախագահ **Կարինե Ալոյանի** կարծիքով, Աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի փոփոխված տարբերակով նախատեսվում է նվազեցնել աշխատանքային ծանր պայմաններում աշխատողների հավելավճարի չափը, նախկին 100 տոկոսի փոխարեն այն սահմանելով 50, իսկ 50-ի փոխարեն 30 տոկոս, որի դեպքում գործատուներն իրենք կսահմանեն իրենց ձեռնտու աշխատավարձի չափը: Այս եւ բազմաթիվ այլ հարցեր քննարկվեցին նաեւ ատոմակայանում, որին մասնակցում էին ՀԱՄԿ-ի նախագահն ու ատոմակայանի տնօրենը:

Թե որքանո՞վ կհաջողվի կանխել գործադիրի կողմից աշխատողների իրավունքների խախտումներն «ամրագրող» հոդվածների հաստատումը, ցույց կտա ժամանակը, սակայն այն, որ վերոհիշյալ փոփոխությունները չեն նպաստի ներքին օդակներում արհմիությունների կայացմանը, կասկածից վեր է:

ԱՆՈՒՇ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:05 Page 1

ԵԿՐՏՈՒՄՆԵՐ

Իրանի «ադրբեջանական» հյուսիսը

Վերջերս Բաքվում՝ Իրանի դեսպանատան առջեւ «Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի» նախաձեռնությամբ կազմակերպվեց բողոքի ցույց. ցուցարարները «մահոգված» լինելով Ուրմիա լճի բնապահպանական խնդիրներով, լիճն անվանել էին «ադրբեջանցիների բնօրրան»: Նույն թեմայով ցույց կոնգրեսը կազմակերպեց նաեւ բուն Ուրմիա լճի շրջակայքում, որտեղ տեղի բնակիչ ազերիները (ոչ ադրբեջանցի-Հ. Ա.), փասորեն ներքաշվեցին ավելի շատ խաղաղական, քան բնապահպանական հարցերի մեջ: Իսկ «պատմությունը» սկսվում է ադրբեջանական հանրակրթական դասագրքերից. Ուրմիա լիճը, ինչպես նաեւ իրանական Գիլան եւ Մազանդարան նահանգները դասագրքերում նշված են որպես Ադրբեջանի տարածքներ (մեր թերթը նախորդ համարներից մեկում անդրադարձել էր ադրբեջանական դասագրքերին-Հ. Ա.): Իսկ իրականությունն այն է, որ ոչ թե «Իրանն է առաջացել ադրբեջանական տարածքների վրա», այլ Ադրբեջան պետությունն է առաջացել եւ կազմավորվել իրանական տարածքների վրա: Այս փաստին բազմիցս անդրադարձել եւ դեռ շարունակում են անդրադառնալ իրանցի մի շարք պատմաբաններ, այս մասին նաեւ մեր թերթը գրեց ապրիլի 3-ի համարում: Սակայն սրանից Ադրբեջանի ախորժակը չի անհետանում. նա Իրանի հյուսիսի նկատմամբ ինչպես ունեցել է նկրտումներ, այնպես էլ շարունակում է ունենալ: Ամենեւին տարօրինակ չէ Բաքվի հրավերը Իսրայելին տարածաշրջան, ընդ որում հենց Իրանի դեմ ուղղված նախագծեր իրականացնելու համար, ամենեւին տարօրինակ չեն ադրբեջանա-իրանական պարբերական «վեճերը» Կասպյան տարածաշրջանի վերաբերյալ: Ադրբեջանը, իրանական հողերում կազմավորվելուց հետո միշտ էլ նպատակ է ունեցել զավթել Իրանի հյուսիսը՝ առանց հաշվի առնելու հարեւան երկրի տարածքային ամբողջականությունը՝ ի դեմ:

Այս ամենի ֆոնին բավական հետաքրքրական շրջադարձ է ձեռնարկել Իրանի ոչ պակաս ամբիցիոզ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Իր նախագահության երրորդ շրջանի նահանգային այցերն Իրանի նախագահը սկսելու է հենց երկրի հյուսիսային շրջաններից, այս մասին տեղեկացնում է «Իրնա.իր» լրատվական կայքը: Ահմադինեժադը հանդիպելու է Ուրմիայի ազգաբնակչության հետ, պատասխանելու է նրանց հուզող հարցերին, այցելելու է շատերի բնակարանները, մի խոսքով՝ երկրի նախագահը հանդիպելու է իր իսկ երկրի քաղաքացիներին:

Հայոց ցեղասպանություն, հայկական Ղարաբաղ, Բաքվի, Սումգայիթի եւ Ադրբեջանի այլ քաղաքներում իրականացված հայերի ջարդեր, սրանք այն իրողություններն են, որոնց «կեղծվածությունը» ամեն կերպ փորձում է «աղացուցել» Ադրբեջանը՝ օգտագործելով նավթադոլարային քարոզչամեքենան, սակայն ամենեւին էլ չմեջբերելով հայ պատմաբաններին կամ տարբեր գործիչներին, այլ արտասահմանցիներին, փաստենք. հարեւան «Ադրբեջանը՝ որպես պետություն կազմավորման առաջին իսկ տարուց՝ 1918-ից կեղծում է իր իսկ պատմությունը», ցավալին այն է, որ այդ «պատմական գիտելիքները» սանում են սերունդներ:

ՀՈՎԻԿ ԱՔՅԱՆ

NASA-ն կրկնակի թանկ կվճարի «Սոյուզներով» ամերիկացիների թռիչքների դիմաց

NASA-ն եւ «Ռոսկոսմոսը» ստորագրել են պայմանագիր, որի համաձայն ԱՄՆ-ը Ռուսաստանին 55,8 մլն դոլար կվճարի 6 աստղագնացներից յուրաքանչյուրի համար, որոնք 2013-2014 թթ. «Սոյուզ» տիեզերանավերով կհասնեն Միջազգային տիեզերական: Այդ մասին հաղորդվում է NASA-ի կայքէջում:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ ամերիկացի աստղագնացների թռիչքների դիմաց վճարվելիք գումարը փաստորեն կրկնապատկվում է. ներկայումս «Սոյուզով» մեկ մարդու թռիչքի դիմաց վճարվում է 26,3 մլն դոլար: 2011-2012 թթ. սակագինը կհասնի արդեն 51 միլիոնի:

NASA-ն հաղորդում է, որ պայմանագիրը նախատեսում է «Սոյուզներով» տեղ հասցնել ոչ միայն աստղագնացներին, այլեւ մեկ անձի հաշվով 110 ֆունտ (50 կգ) բեռ: Ռուսաստանը նաեւ պարտավորություններ է ստանձնել վերացնելու թափոնները եւ աղտոտվելու աստղագնացների բուժպատսարկումը:

Ասոշիեյթեդ պրեսը նշում է, որ NASA-ին անհրաժեշտ են «Սոյուզները», քանի որ ամերիկյան գործակալությունը որոշել է 2010-ին դուրս գրել իր տիեզերական մաքոքների նավատորմը: Ամերիկյան վերջին «Շատլը» Միջազգային տիեզերական թռավ 2009-ի սեպտեմբերին:



NASA-ի ներկայացուցիչները «Սոյուզներով» աստղագնացների թռիչքների գների բարձրացումը բացատրում են նրանով, որ ռուսական կողմը նոր տիեզերանավեր պետք է կառուցի լրացուցիչ արձակումների համար:

Սողանքներից 100 զոհ Ռիո դե Ժանեյրոյի նահանգում

Բրազիլիայում՝ Ռիո դե Ժանեյրոյի նահանգում երկուշաբթի երեկոյան սկսված եւ դեռ շարունակվող հորդառատ անձրեւներն առաջացրել են սողանքներ, որոնցից արդեն 100 մարդ է զոհվել: BBC-ն հաղորդում է, որ առնվազն 33 մարդ տարերքի զոհ է դարձել Ռիո դե Ժանեյրո քաղաքում, որտեղ մեկ օրում 280 մմ անձրեւ է տեղացել: 33 մարդ ջրահեղձ է եղել Նիտերոյ քաղաքում: Սան Գոնսալոյում արձանագրված է 12, Պետրոպոլիսում՝ 1 զոհ:

Նահանգապետ Սերժիո Կաբրալը աղետյալ գոտում հայտարարել է արտակարգ դրություն եւ բնակիչներին կոչ է արել հեռանալ տներից:

Ռիո դե Ժանեյրոյի քաղաքապետ Էդուարդ դա Կոստա Պաեսը, ընդհակառակը, քաղաքացիներին խորհուրդ է տալիս հնարավորության սահմաններում դուրս չգալ փողոց:

Իշխանությունները խոստովանում են, որ տարածաշրջանում փոխադրամիջոցները գրեթե չեն գործում: Փակ է «Սանտոս-Դյումոն» օդանավակայանը, փողոցներում լքված են տասնյակ ավտոմեքենաներ, բազմաթիվ տներ հիմնահատակ կործանված են:

«Ռիոյում քաոս է տիրում: Բոլոր կենտրոնական փողոցները ջրածածկ են եւ փակ: Այնտեղ մտնող մարդիկ իրենց կյանքը մեծ վտանգի են ենթարկում», հայտարարել է Պաեսը:

Տարերային աղետի զոհերի մեծ մասը քաղաքի հետնախորշերի բնակիչներ են: Ռիո դե Ժանեյրոն բնակչությամբ Բրազիլիայի ոչ միայն երկրորդ քաղաքն է, այլեւ ֆուտբոլի աշխարհի 2014 թ. առաջնության անցկացման վայրը եւ 2016 թ. ամառային օլիմպիադայի մայրաքաղաքը:

Ռիո դե Ժանեյրոյում փետրվարին ավարտված ամառը հատկապես շոգ էր եւ անձրեւային: BBC-ն հիշեցնում է, որ հունվարին սողանքներից 39 մարդ էր զոհվել Անգրա-դոս-Ռեյս տեղական առողջավայրում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Ամերիկայի պատասխանը հայերի ցեղասպանությանը: Անցյալում եւ այժմ»

Այս թեմայով ապրիլի 28-ին դասախոսական երեկո է կազմակերպվելու Բելմոնտի (Մասաչուսեթս) «Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի» (ՀՈՒՀԱԱ) կենտրոնում, նպատակ ունենալով հասարակության ավելի լայն շրջանակներին ներկայացնելու Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտում (ՄՏԻ) մարտի 13-ին անցկացված նույն թեմայով «Վիլսոնից Օբամա» գիտաժողովի նյութերն ու եզրակացությունները:

Այս մասին մեզ հասցեագրված մամուլի հաղորդագրությունն ավելացնում է, որ գիտաժողովի մասնակիցներից Սյուզան Մորանյանն ու Մարկ Մամիկոնյանը մասնակցելու են այս դասախոսությանը, ներկայացնելով իրենց զեկուցումների առավել ընդարձակ տարբերակները: ՀՈՒՀԱԱ-ի տնօրենների խորհրդի անդամ եւ Հայ կանանց միջազգային ասոցիացիայի նախագահ դոկտ. Սյուզան Մորանյանը խոսելու է «Ամերիկայի արտաքին քաղաքականությունը եւ 1915-1927 թթ. հայերի ցեղասպանությունը» թեմայով, իսկ ՀՈՒՀԱԱ-ի ակադեմիական հարցերի գծով տնօրեն եւ Հայկական ուսումնասիրությունների ընկերության փոխնախագահ Մարկ Մամիկոնյանն անդրադառնալու է «Թուրքահայկական հաշտեցումը եւ դեպի Օբամայի «Մեծ եղեռն» տանող ճանապարհը» թեմային:

Որպես համակարգող հանդես է գալու ՄՏԻ-ի կոնֆերանսի կազմակերպիչներից դոկտ. Պետրոս Տեր-Մաթոսյանը:

Հ. Ծ.

Անտրամաբանական չափերի պատիժները

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Թուրքիային 12 անգամ մեղադրել է ազատ արտահայտվելու իրավունքը խախտելու մեջ: Վերջին հիսուն տարում դատարանի արձակած վճիռների 17 տոկոսը վերաբերել է Թուրքիային:

Նման տեղեկություն է պարունակում «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպության մամլո հաղորդագրությունը, որտեղ քննարկվում են Թուրքիայում քրդական մամուլի սահմանափակումները:

Այսպես, Դիարբեքիրի դատարանը մարտի 30-ին երեք տարվա բանտարկության է դատապարտել Թուրքիայի միակ քրդալեզու «Ազատիյա վելաթ» (Ազատ երկիր) օրաթերթի ամենախոշոր բաժնետեր՝ Վեդաթ Քուրսունին՝ PKK-ի քարոզչությամբ զբաղվելու մեղադրանքով: Թերթի կառավարիչ-խմբագիրը (մինչեւ անցյալ տարի ազատազրկվելը) վերջինն է այն քուրդ լրագրողներից, որոնք զոհ են դարձել հակահաբեկչության թիվ 3713 օրենքի:

«Մենք դատապարտում ենք այդ թերթի դեմ սանձազերծված հետապնդումները: Նման անհամաչափ պատիժները բացահայտում են երկրի կառավարական շրջանակների քաղաքականության մեջ տեղ գտած հակասությունները, հատկապես անցյալ տարվա նախաձեռնությունից հետո, երբ ենթադրվում էր, որ առավել լայն իրավունքներ են տրվելու երկրի 25 միլիոն (բնակչության մեկ չորրորդը) քրդերին», ասված է հաղորդագրության մեջ, որտեղ նշված է նաեւ, որ եթե 2006-2008 թվերի բոլոր հոդվածների համար դատապարտեին խմբագրին, ապա նա բանտում պետք է մնար 525 տարի: Քուրսունին փոխարինած Օզան Քիլինչին նույնպես դատապարտել են (փետրվարի 10-ին) 21 տարվա եւ 3 ամսվա բանտարկության:

Հ. Ծ.

Սինթեզվել է Մենդելեեւի աղյուսակի 117-րդ տարրը

ՌԴ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի գիտնականները ամերիկացի գործընկերների հետ պատմության մեջ առաջին անգամ հաջողությամբ սինթեզել են Մենդելեեւի պարբերական աղյուսակի 117-րդ տարրը: Այդ մասին ՌԻԱ գործակալությանը հայտնել է գիտափորձի ղեկավար, ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանը: «Մենք հավաստի կերպով ամրագրեցինք 117-րդ տարրի միջուկների ծննդյան վեց իրադարձություն եւ այդպիսով լրացրինք Մենդելեեւի աղյուսակում մինչեւ վերջերս 116-րդ եւ 118-րդ տարրերի միջեւ դատարկ մնացած տեղը», ասել է Հովհաննիսյանը:

Կարզային կասկածում են թմրամոլության մեջ

Աֆղանստանում ՄԱԿ-ի նախկին դեսպան Պիտեր Գելբրայթը կասկածներ է արտահայտել այդ երկրի նախագահ Համիդ Կարզայի հոգեկան առողջության առնչությամբ եւ նույնիսկ ենթադրություն է արել, թե նա թմրադեղ է օգտագործում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ամերիկյան հեռուստատեսությանը տված հարցազրույցում Գելբրայթը Կարզային բնութագրել է որպես «դյուրաբորբոք եւ մղումներով գործող» մարդու: Նա ավելացրել է, որ, ըստ որոշ տեղեկությունների, նախագահը թուլություն ունի «Աֆղանստանից արտահանվող որոշակի ապրանքների» նկատմամբ:

Պիտեր Գելբրայթը տվյալ մեկնաբանությունն արել է Համիդ Կարզայի աղմկալի որոշ հայտարարություններից հետո: Այսպես, ապրիլի 3-ին պատգամավորների հետ դռնփակ խորհրդակցության ժամանակ Կարզայը սպառնացել էր անցնել «Թալիբան» շարժման կողմը: Այդ մասին ապրիլի 6-ին հայտնի էր դարձել «The Times of India» հրատարակումից: Ավելի վաղ Կարզայը օտարերկրացիներին ամբաստանել էր Աֆղանստանի անցյալ տարվա նախագահական ընտրություններում կեղծիքներ կազմակերպած լինելու մեջ: RFI ռադիոկայանի տվյալներով, դրանից հետո ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ հեռախոսազրույցի ժամանակ Կարզայը փորձել է արդարանալ, ասելով, թե ինքը նկատի չէր ունեցել ամերիկացիներին: Իսկ պետքարտուղարը նրան խորհուրդ է տվել օտարներին ամբաստանելուց առաջ բարեփոխել սեփական երկրի կաբառասուն վարչակարգը:

Չնայած այս ամենին, Կարզայի վարքագիծը որոշակի մտահոգություն է պատճառում ամերիկացիներին, նշում է Ֆրանսպրեսը: Գելբրայթի կարծիքով, նման վարքագիծը կարող է ի չիք դարձնել կոալիցիոն ուժերի հաջողությունները, քանի որ հասկացնում է, որ Աֆղանստանի ղեկավարը «չի կարող լինել հուսալի դաշնակից»:

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:04 Page 1

ԱԶԳ

Մշակույթ

Հայ երաժշտության նոր ալբոմ

Արվեստի տեսակների ամբողջ ընտանիքում երաժշտությունն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Երաժշտական արվեստի գործընթացը կախված է երեք պայմաններից՝ նոտայական տեքստից, կատարումից եւ ձայնագրությունից: Երաժշտության կատարումը եւ ձայնագրությունը երկարացնում են կոմպոզիտորական տեքստի կյանքը, եւ եթե պատկերացնենք առաջիկա եւ վիզուալ ձայնագրության կատարելագործվող տեխնիկական հնարավորությունները, ապա կարելի է հանգիստ լինել համաշխարհային երաժշտական ժառանգության ապագայի համար:

Բայց ինչո՞ւ վարվենք ազգային (դասական եւ ժամանակակից) ժառանգության հետ: Չէ՞ որ աշխարհում ոչ ոք հենց այնպես չի ձայնագրի հայկական երաժշտություն, բացառությամբ Ա. Խաչատրյանի երաժշտության: Արտասահմանում հայկական երաժշտությունը սովորաբար ձայնագրում են մեր հայրենակիցները կամ նրանց բարեկամները, օրինակ, Չիլինկիրյան-քառյակը՝ Լոնդոնում, Կիմ Քաշաբյանը եւ Հասմիկ Պապյանը՝ Գերմանիայում, Մովսես Պողոսյանը՝ ԱՄՆ-ում: Կան նաեւ այսպիսի հազվագյուտ օրինակներ. Մոսկվայի Ժամանակակից երաժշտության համույթը Ֆրանսիայում ձայնագրում է Ա. Զոհրաբյանի հեղինակային ձայնասկավառակը, իսկ գերմանական Ռոզամունդ-քառյակը՝ Տ. Մանսուրյանինը: Հենց վերջերս Ալեքսանդր Բրուսիլովսկին Փարիզում ձայնագրեց Գագիկ Հովունցի ստեղծագործությունների 2 ձայնասկավառակ:

Խորհրդային ժամանակներում հայկական երաժշտությունը ձայնագրում էր մոսկովյան «Մելոդիա» ֆիրման: Գրեթե բոլոր նշանակալի կոմպոզիտորներն ունեին առանձին երկերի ձայնագրություններ, ոմանք՝ նաեւ հեղինակային ձայնաշնակներ: Ձայնագրվում էին նոր ստեղծագործություններ, ինչպես նաեւ բոլորովին երիտասարդ կոմպոզիտորների երաժշտությունը: Եվ արտադրության այդ ամբողջ մշակված պրոցեսը՝ նոտաների եւ երաժշտական գրականության թողարկման հետ, համահավասար ապահովում էր երաժշտական արվեստի, գեղարվեստորեն դրականի բնական կեցությունը:

Անկախության հռչակումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց եւ ըստ երեւույթին դեռ երկար հարկ կլինի սպասել երբեմնի պետական նախաձեռնության վերականգնմանը: Իսկ առայժմ (թվային տեխնոլոգիաների դարաշրջանում) ամբողջ ծանրությունն ընկած է կատարողների եւ կոմպոզիտորների ուսերին, որոնք ուզում են իրենց ստեղծագործական աշխատանքի արդյունքները դարձնել լայն հասարակայնության սեփականությունը: Երեւանում ի հայտ է եկել հեղինակային մի քանի ձայնասկավառակ (Ա. Բաբաջանյանի, Ղ. Սարյանի, Տ. Մանսուրյանի, Ս. Զաքարյանի երաժշտությամբ), Հայաստանի բոլոր առաջատար երգչախմբերը ձայնագրել են Կոմիտասի երաժշտությունը, կան մի շարք ձայնասկավառակներ կամերային-գործիքային ժանրի ստեղծագործություններով: Հայաստանի կոմպոզիտորների միությունը թողարկել է հայ երաժշտության համառոտ ընտրանու երկու ալբոմ, որտեղ խոշոր ձեւերը ներկայացված են հատվածաբար, իսկ փոքրերը՝ ամբողջությամբ... Իհարկե, այդ ամենը մի կաթիլ է ծովում, բայց քանի դեռ չկա հայ երաժշտության ֆոնդային ձայնագրությունների ստեղծման ազգային ծրագիր, ուրախացնում են նաեւ կաթիլները:

Եվ ահա՝ նոր ուրախություն. լույս է տեսել «Armenian Classics and the Folk Idiom» («Հայ դասականները եւ ժողովրդական իդիոմատիկան») ալբոմը, որը թողարկել է Armenian Music Center Inc. ֆիրման (Երեւան-Լոս Անջելես): Երաժշտության կատարողն է Հայաստանի ազգային կամերային նվագախումբը (ՀԱԿՆ), գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Արամ Ղարաբեկյան: Ձայնագրությունը կատարվել է դեռ 2004-ի հունիսին Երեւանի այսպես կոչված Տերյան-Ստուդիայում (ձայնագրության ինժեներ Ռասսել Դոկինս): Ալբոմը լույս է տեսել երկու ձայնասկավառակով, թեեւ սկզբում նախագիծը ենթադրում էր երեքը (Հայաստանի Կամերային երգչախմբի առանձին սկավառակ, ղեկավար՝ Ռոբերտ Մլքեյան): Ցավոք, նախագծի գաղափարը չիրականացվեց ՀԱԿՆ կորպորացիայից երգչախմբի դուրս գալու պատճառով: Այդ մասին գիտեմ որպես ալբոմի բուկլետի տեքստի հեղինակ (անգլերեն թարգմանել է Նունե Հարությունյանը). ալբոմը պետք է կոչվեր «The Musical Landscape of Armenia» («Հայաստանի երաժշտական բնապատկերը»):

Անտարակույս, Կոմիտասի, Է. Հովհաննիսյանի, Տ. Մանսուրյանի, Դ. Հալաջյանի լավ երաժշտության շնորհիվ «երաժշտական բնապատկերը» նշանակալիորեն ավելի լիարժեք կլիներ, բայց նույնիսկ իր նվագախմբային տեսքով երկու սկավառակավոր ալբոմը (N 26-3620980) տպավորիչ է 20-րդ դարի հայ երաժշտության ոճային համայնապատկերով: Առաջին ձայնասկավառակի վրա դասական եւ ժամանակակից երաժշտության համակեցությունը ներկայացված է Էդուարդ Միրզոյանի (Լարային նվագախմբի վարիացիաներ, «Թեմա վարիացիաներով» կվարտետի փոխադրումն իրականացրել է Ղարաբեկյանը), Ավետ Տերտերյանի (Կվարտետ թիվ 1 դո մաժոր, նվագախմբային փոխադրումը Ղարաբեկյանի), Էդուարդ Հայրապետյանի («Առտուն» սոպրանոյի, դաշնամուրի եւ լարային նվագախմբի համար, խոսք՝ Մ. Մեծարենցի), Հարություն Դելլալյանի («Ecloga» ֆլեյտայի, դաշնամուրի եւ լարային նվագախմբի համար) անուններով:

Երկրորդ ձայնասկավառակի վրա պահպանված է կոմպոզիտորների կողմից որպես հիմք ֆոլկլորային նյութի օգտագործման սկզբունքը: Այստեղ ներկայացված են Կոմիտաս-Ասլամազյանի (Սարգիս Ասլամազյանը՝ Կոմիտասի անվան լարային քառյակի հիմնադիրը, հավերժացրել է Կոմիտասի երգերը) մանրանվագները, Ռուբեն Ալթունյանի մի քանի պիեսներ, այդ թվում՝ ժողովրդական գործիքների (ջութակ, պկու) եւ լարային նվագախմբի համար գրված «Հարազաս մեղեդիներ» շարքից, ինչպես նվագախմբի համար նրա գրած «Խաչատուրիանա» սյուիտը, որը հիմնված է առավելապես Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի գունագեղ երաժշտության վրա: Բացի դրանից, տվյալ սկավառակի վրա ձայնագրված են Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի պարերը եւ «Համբարձում յայլա» խմբերգային տեսարանը Ստեփան Շահարյանի նվագախմբային տարբերակով, ինչպես նաեւ «Ծիծեռնակ» երգի նրա մշակումը դաշնամուրի եւ լարային նվագախմբի համար:

Գրախոսվող ալբոմը հայտնվել է թեկուզ ուշացումով, բայց ոչ պատահաբար: Դեռ 1998-ին ՀԱԿՆ-ը թողարկեց ձայնասկավառակ է. Միրզոյանի (Սիմֆոնիա), Ալեքսանդր Հարությունյանի (Սիմֆոնիետտա), Է. Հայրապետյանի («Կորուսյալ օդապարիկ»՝ գրված ՀԱԿՆ-ի պատվերով) երաժշտությամբ: 2004 թ. ձայնագրությունը (ալբոմի թողարկումը թվագրված է 2010-ով) տեխնիկական որակով եւ ընդհանուր գեղարվեստական ձեւավորմամբ զգալիորեն բարձր է: Իսկ նոր ալբոմի գլխավոր արժանիքը Ա. Ղարաբեկյանի ղեկավարած նվագախմբի կողմից երաժշտության մեկնաբանումն է (մենակատարներ. սոպրանո՝ Նունե Բադալյան, ֆլեյտահար՝ Տաթեւիկ Բաղդասարյան, դաշնակահար՝ Էլլա Մելիք-Հուսյան):

Համերգներում քանիցս հնչած, իսկ հիմա ալբոմում ներկայացված ստեղծագործությունները մասամբ արտացոլում են նվագախմբի գերակայությունները ազգային երաժշտության կատարման ասպարեզում: Եվ կարելի է ափսոսալ, որ Հայաստանի ինչպես այդ, այնպես էլ ուրիշ համույթների նվագած վիթխարի թվով հայկական երկեր մնացել են միայն համերգային ծրագրաթերթիկներում:

Հայ երաժշտության նոր ալբոմը, պերճախոս կերպով վկայելով նվագախմբի գեղարվեստական մակարդակի եւ արժանի ճանաչման մասին, որոնք 21-րդ դարում կապված են ունկնդիրների լայն լսարանի հետ (ոչ միայն Հայաստանում եւ ոչ միայն հայերի), մեզ կոչ է անում առավել ինտենսիվորեն քարոզել հայրենական երաժշտական մշակույթը: Միանգամայն ակնհայտ է, որ եկել է «քարերը հավաքելու» ժամանակը. տարբեր մասնագիտությունների տեր տաղանդավոր մասնագետները եւ Հայաստանի մի ամբողջ շարք երաժշտական համույթներ պետք է ողջ աշխարհում դառնան պահանջված: Մենք, որպես կանոն, սիրում եւ գնահատում ենք տարբեր երկրներից եկող երաժիշտներին: Հիմա հարկավոր է, որ սովորեն մեզ նույնպես սիրել եւ գնահատել: Աստիճանաբար դրանքը կարող է զգալի չափով օգնել այդ գործին:



ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Ցեմ ուզում լռության մատնել ՀԱԿՆ-ի պառակտման փաստը: Առավել բարեհաջող (համենայն դեպս, այդպես էր թվում կողքից) համույթներից մեկը հանկարծ պայթում է ներսից, ղեկավարի հանդեպ իր վերաբերմունքը պատճառաբանելով բացարձակապես անհամոզիչ եւ սուբյեկտիվ փաստարկներով: Օստրակիզմի այդ ձեւը, երբ վառ անհատը շատերին (կամ գրեթե բոլորին) ձեռնտու չէ, լավ հայտնի է: Անհատի մասին կարելի է հորինել ամեն ինչ եւ ճարպկորեն մատուցել որպես ճշմարտություն: Կարելի է հեգնանքով արձանագրել ինչ-որ վրիպում (ո՞վ սխալներ չի գործում) եւ այն դարձնել գործողությունների կարգախոս:

Գլխավորն այն է, որ ուզում են ինչ-որ մեկի հետ համերաշխորեն վերացնել նրան, ով բարձրանում է «գազոնային մակարդակից» (Պ. Սեւակ): Ես դա լավ գիտեմ անձնական փորձով. Երեւանի կոնսերվատորիայի վարչակազմը մշտապես զարմացնում է իր արարքների «նրբահնարությամբ»...

Ոչ միայն հեռավոր Ամերիկայում, այլեւ մերձավոր, եղբայրական Ուկրաինայում (նկատի ունեմ նրա աշխատանքը Լվովի նվագախմբի հետ) հետքեր թողած մաեստրո Արամ Ղարաբեկյանի ստեղծագործական գործունեությունը, ասենք նաեւ նրա ամբողջ կյանքը ոչ այլ ինչ է, քան ծառայություն երաժշտությանը: Ներողություն եմ խնդրում վերամբարձ տոնի համար, բայց հայ դիրիժորներից ո՞վ է կարողացել ստեղծել այդքան լայնընդգրկուն եւ բազմալան նվագացանկ, ունկնդիրներ գտնելով ամբողջ Հայաստանում եւ Արցախում: Ո՞վ է կատարել այդքան շատ նոր երաժշտություն, բացահայտել այդքան մեծ թվով նոր կատարողների, ստեղծել համերգների նոր տեսակներ եւ ըստ էության նոր, ներքուս դիֆերենցված լսարան. մաեստրոն լավ գիտեր, թե ինչ է հարկավոր պրոֆեսիոնալին եւ ինչ՝ պարզապես երաժշտասերին:

Ամենքիցս լավ դա գիտեն նվագախմբի երաժիշտները, որոնք հրապարակայնորեն հրաժարվեցին իրենց ղեկավարից: Միայն թե հարկ չկա Ղարաբեկյանին հրապարակավ մեղադրել Հայաստանի կամերային նվագախմբի ամբողջ նախապատմությունը չընդունելու մեջ (տե՛ս **«Ազգի»** ս. թ. փետրվարի 16-ի համարի բաց նամակը): Խնդրում եմ բացել դեռ երեք տարի առաջ պատրաստված եւ նվագախմբի ամբողջ ղեկավարության հավանությանն արժանացած նոր ալբոմի բուկլետի տեքստը. հենց սկզբից նշված են 1962 թվականը (համույթի ստեղծման տարին) եւ նվագախմբի հիմնական ղեկավարները՝ Զարեհ Սահակյանցը եւ Ռուբեն Ահարոնյանը:

ՄՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ՆՈՐ ԳԻՐՔ

Մոնթե. «Ես այսօր այստեղ եմ, որովհետեւ իրավունք չունեմ այլ տեղ լինելու»

Արցախյան պատերազմի լեգենդար հրամանատար, ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս, հրապարակախոս, հնագետ, ազգային-ազատագրական պայքարի անխոնջ քարոզիչ Մոնթե (Ավո) Մելքոնյանին էր նվիրված երեկ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կազմակերպված ցերեկույթը, որի ընթացքում ներկայացվեց լրագրող-հրապարակախոս Ասպրամ Ծառուկյանի «Բարեւ, ինչպե՞ս եք, լա՞վ եք...» գիրքը, որտեղ զետեղված են հուշեր Մոնթեի մասին: Շնորհանդեսը բացվեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի խոսքով. «Մոնթե Մելքոնյանը նորանկախ հայրենիքի համար Հայաստան-սփյուռք գործակցության կենդանի կամրջի առաջին իրական, անձնվեր կառուցողներից էր, այդ գործակցության ազնիվ-ազնվական օրենսդիրներից: Նա եկավ, եկավ հայրենիք, եկավ ապացուցելու, որ երբ հայրենիքը վտանգի մեջ է, սահմաններ այլեւս չկան հայ ժողովրդի համար, եկավ ու հերոսացավ... Նա իր կյանքը զոհեց հանուն Արցախի, հանուն հայի հաղթանակի եւ նորօրյա դասեր տվեց հայ սերունդներին, թե՝ հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, թե հայրենյաց վտանգը ջնջում է աշխարհագրական տարածությունները... Ապրել եւ մեռնել հայրենիքի համար: Սա մեր ժողովրդի բարոյական դավանանքն է եւ պատմական վարքը...»:

Այնուհետեւ նախարարը հատուկ շնորհակալություն հայտնեց գրքի հեղինակին՝ Ասպրամ Ծառուկյանին, որն էլ արժանացել էր ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրին՝ ազգանվեր գործունեության եւ «Մայրության տոնի» առիթով: Հուզիչ ու տպավորիչ էր Մոնթեի մարտական ընկեր, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի խոսքը. «Մոնթեն իր իմաստալից կյանքում ձեռք բերված փորձի ու հմտությունների շնորհիվ կարողացավ այդ դժվարին ժամանակաշրջանում մարտակերտ գալ ու իր հետեւից տարավ շարքերը: Նա չափից ավելի արագ կողմնորոշվում էր մարտական գործողությունների ժամանակ ու նաեւ կարողանում էր իր զինվորներին գոտեպնդել ու մարտի տանել: Նա իր հերոսի կերպարը կարողացավ տարբեր իրավիճակներում, տարբեր խառը դրություններում պահպանել: Նա զոհվեց, սակայն նրա հերոսական կերպարը մնաց ու դարձավ վառ օրինակ...»:

Լեգենդար հրամանատար, սփյուռքահայ Մոնթե Մելքոնյանին այդ օրը շատը մեծարեցին իրենց ջերմ ու անկեղծ խոսքերով, նաեւ ցուցադրվեց ֆիլմ, որը նվիրված էր Մոնթե Մելքոնյանին: Խոսք ասաց նաեւ գրքի հեղինակ Ասպրամ Ծառուկյանը, ով մեծագույն նվիրումով եւ սիրով գրքում ներկայացրել է Մոնթե-մեծ հայի, հայրենասերի հերոսական կերպարը, պրպտել ու գտել նրա մարտական ընկերներին, նրանցից քաղել հուշեր Մոնթեի մասին: Ցերեկույթը համեմված էր նաեւ գեղարվեստական մասով, որի ընթացքում ելույթներ ունեցան երգիչներ, ասմունքողներ, պարողներ:

«Ազգը» խնդրեց **Արկադի Տեր-Թադեւոսյանին** (Կոմանդոս) բնութագրել իր զինակից ընկերոջը՝ Մոնթեին, որի հետ 1992-ի փետրվարից մինչեւ 1993-ի մարտը միասին մարտական գործողություններ են վարել: «Արդեն Շահումյանում եղած ժամանակ նրա մասին շատ լավ կարծիքի էինք: Երբ նա եկավ Մարտունի, որտեղ մենք շատ հզոր հրամանատարներ ունեինք, որոնք մարտի դաշտում անփոխարինելի էին, սակայն իրար հետ լեզու չէին գտնում: Եվ երբ Վազգեն Սարգսյանը եւ Սերժ Սարգսյանը Մոնթեին ուղարկեցին Մարտունի, հենց առաջին օրվանից շատերը վատ ընդունեցին նրան: Բայց, իհարկե, որոշ ժամանակ անց Մոնթեն կարողացավ իրեն լավ ընդունած հրամանատարների միջոցով լեզու գտնել իրեն վատ ընդունողների հետ, Նորաշենում նրանց հասկացնել, որ հայրենիքի համար պայքարն առաջնային է ու վեհ ամեն ամբիցիայից: Եվ երբ հարթվեց ամեն ինչ, Մոնթեն իր մարտական գերազանց գիտելիքները փոխանցեց թ՛ւ հրամանատարներին, թ՛ւ զինվորներին, որոնց նա հավասարապես հարգում ու սիրում էր: Մենք շատ բանով երախտապարտ ենք Մոնթեին, նրանից շատ բան ենք սովորել...»:**

Ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ նա այսօր մեզ հետ չէ եւ չի վայելում հաղթանակի պտուղները...

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:07 Page 1

Քառյակը կարունակի գավաթային մրցավեճը

Կիսաեզրափակիչի մյուս զույգը կկազմեն «Միկան» ու «Բանանցը»

Երեկ կայացած երկու հանդիպումներից հետո հայտնի դարձավ ֆուտբոլի Հայաստանի գավաթի կիսաեզրափակիչի 2-րդ զույգը: Եզրափակիչի ուղեգիրը կվիճարկեն «Բանանցն» ու «Միկան»: Երկու թիմերն էլ դեռեւս առաջին հանդիպման ժամանակ հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ էին ներկայացրել: «Բանանցը» Գյումրիում հաղթել էր 1-0 հաշվով, իսկ «Միկան» սեփական հարկի տակ 3 անպատասխան գնդակ էր անցկացրել «Կիլիկիայի» դարպասը:

«Հանրապետական» մարզադաշտում կայացած «Բանանց»-«Շիրակ» հանդիպումն անցավ աշխույժ մրցակցությունում, դաշտի տերերի առավելությամբ: Արդեն 5-րդ րոպեին Սամվել Մելիքոնյանը գլխի հարվածով բացեց հաշիվը՝ եզրափակելով ձախ եզրից Բեսոյի կատարած փոխանցումը: Մինչեւ ընդմիջում Մելիքոնյանը կրկնապատկեց հաշիվը: Այս անգամ Սամվելն ինքն աջ թեւով սրընթաց ճեղքում կատարեց ու մտնելով տուգանային հրապարակ, գրավեց դարպասը: 42-րդ րոպեին կարող էր աչքի ընկնել Բեսոն, սակայն չօգտվեց դարպասապահի սխալից, որը ձեռքից բաց էր թողել գնդակը:

«Շիրակը» հիմնականում պաշտպանվում էր ու առիթի դեպքում սուր հակագրոհներ էր կազմակերպում: Դրանցից երկուսը շաս վստանգավոր էին, սակայն «Բանանցի» դարպասապահ Ստեփան Ղազարյանը հաջող խաղաց՝ հետ մղելով Անդրանիկ Բարիկյանի եւ Մկրտիչ Նալբանդյանի հարվածները:

Երկրորդ խաղակեսն էլ ակտիվ սկսեցին «Բանանցի» ֆուտբոլիստները: 57-րդ րոպեին Բեսոյի վտանգավոր հարվածը դարպասապահը հանեց անկյունային: 6 րոպե անց եռաքայլ կոմբինացիայի արդյունքում Օրտեգան 3-րդ գոլը խփեց: Հետեւեց «Շիրակի» հակագրոհը եւ Մկրտիչ Նալբանդյանը փորձեց խոցել դարպասը, սակայն հաջող խաղաց դարպասապահը: Խաղավերջում Բեսոն կարող էր 4-րդ գոլը խփել, սակայն մեն մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, վրիպեց:

Այսպիսով, հաղթելով 3-0 հաշվով, «Բանանցը» ոչ միայն մտավ կիսաեզրափակիչ, այլեւ իրավունք ստացավ մասնակցելու Եվրոլիգայի մրցաշարին: Քառորդ եզրափակիչի մյուս խաղում «Հրազդանում» մրցեցին «Կիլիկիան» ու «Միկան»: 69-րդ րոպեին «Միկայի» հարձակվող Բոսի Դեմելի խփած միակ գնդակը հաղթանակ պարգեւեց թիմին:

Մեսիի ֆուտբոլային «պոկերը»

Չեմպիոնների լիգայի մրցաշրջանում հայտնի դարձավ կիսաեզրափակիչի առաջին զույգը: Այդ փուլում եզրափակիչի ուղեգիրը կվիճարկեն իսպանական «Բարսելոնն» ու իտալական «Ինտերը»:

Անգլիայում ձեռքից բաց թողնելով «Արսենալի» նկատմամբ հաղթանակ տոնելու հնարավորությունը (2-2), «Բարսելոնը» սեփական հարկի տակ պարզապես ջախջախեց մրցակցին: Պարզապես ֆանտաստիկ խաղ ցուցադրեց աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Մեսին, որը դարձավ «Արսենալի» դարպասը խփած բոլոր 4 գոլերի հեղինակը: Իսկ առաջինն այդ խաղում հաջողության էին հասել հյուրերը Բենդտների խփած գոլի շնորհիվ: Լիոնել Մեսիի ֆուտբոլային «պոկերը» հնարավորություն տվեց նրան 8 գնդակով գլխավորել չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկության լավագույն ռմբարկուների ցուցակը՝ շրջանցելով 7 գոլ խփած Քրիստիանու Ռոնալդուին: Այժմ Մեսիի հաշվին 25 գոլ է գրանցված չեմպիոնների լիգայի մրցաշարում: Այս ցուցանիշով նա հավասարվեց «Բարսելոնի» ռեկորդակիր Ռիվալդոյին:

Թիմերի մարզիչների կարծիքը խաղի մասին հետեւյալն է:

Խոսեպ Գվարդիոլա («Բարսելոն»)-Շնորհավորում եմ թիմին կիսաեզրափակիչ մտնելու առթիվ: Վերջին 5 տարիներին «Բարսելոնը» 4-րդ անգամ է կիսաեզրափակիչ մտնում, ինչը խոսում է թիմի բարձր կարգի մասին: Մենք ավելի շաս էինք տիրում գնդակին, թեեւ խաղն անցավ երկուստեղ սուր գրոհներով: Հաշիվը հավասարեցնելուց հետո շաս ագրեսիվ գործեցինք: Շաս գոհ եմ, թե ինչպես ձեռք բերեցինք այս հաղթանակը:

Արսեն Վենգեր («Արսենալ»)-Մենք պարտվեցինք մեզանից ուժեղ մի թիմի, որում խաղում է աշխարհի լավագույն ֆուտբոլիստը: Դա հետ մեկտեղ, մենք ունեինք հաղթելու հնարավորություն: Ափսոս, որ 1-0 հաշվի ժամանակ չիրացրինք գոլային մի քանի պահեր: Իսկ ահա մեր դարպասը բաց թողած գոլերը նվեր էին մրցակցին: Երբ խաղադաշտում Մեսին է, նա կարող է պատժել ձեր ցանկացած սխալի համար: Ոչ մի կասկած չունեմ, որ հենց Մեսին է աշխարհի լավագույն ֆուտբոլիստը: Շնորհավորում եմ «Բարսելոնին», որն այսօր գերազանցեց մեզ:

Մոսկվայի ԲԿՄԱ-ի ֆուտբոլիստներին ոչ միայն չհաջողվեց սեփական հարկի տակ ռեւանշի հասնել «Ինտերի» նկատմամբ, այլեւ կրկին պարտվեցին 0-1 հաշվով: Արդեն 6-րդ րոպեին Սնեյդերը բացեց հաշիվը, որից հետո «Ինտերը» խաղադաշտում պարզապես ժամանակ էր սպառում՝ խնայելով ֆուտբոլիստների ուժերը:

Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին է:

Լեոնիդ Սլուցկի (ԲԿՄԱ)-Ցավոք հանդիպումը սկսվեց ոչ այնպես, ինչպես կցանկանայինք: Արագ գոլ բաց թողեցինք, Վասիլի Բերեզուցկին էլ վնասվածք ստացավ, Օդիային հեռացրին 2-րդ խաղակեսի սկզբին: Այս ամենը մեզ չթույլատրեց ռեւանշի հասնել «Ինտերի» նկատմամբ:

Ժոզե Մոուրինյո («Ինտեր»)-Ի տարբերություն առաջին խաղի, երբ չիրացրինք բազմաթիվ գոլային պահեր, այս անգամ գոլ խփեցինք առաջին իսկ առիթի դեպքում: Ինձ դուր չեկավ թիմի խաղը հակագրոհներ կազմակերպելիս, նույնիսկ հաշվի առնելով այն, որ մինչեւ վերջ չհաջողվեց հարմարվել արհեստական խոնաշածկով խաղադաշտին: Իհարկե, կարող էինք ավելի շաս գոլեր խփել: Սակայն մեր գլխավոր խնդիրը հաղթելն էր եւ դրա իրագործումը սկսեցինք 6-րդ րոպեից սկսած:

Օլիմպիական աճուրդ

Վանկուվերում կայացած աճուրդում հոկեյի Կանադայի հավաքականի հարձակվող Սիդնի Կրոսբիի խփած տափօղակը վաճառվել է 13 հազար դոլարով: Վանկուվերի օլիմպիադայում ԱՄՆ-ի հավաքականի դարպասը խփած այդ տափօղակը կանադացիներին հաղթանակ էր պարգեւել հոկեյի մրցաշարում: Իսկ Շվեյցարիայի հավաքականի հետ խաղում Կրոսբիի կրած մարզաշապիկը վաճառվել է 35 հազար դոլարով:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

600 հազար եվրո մենամարտի իրավունքը զիջելու համար

WBA-ի վարկածով գերծանր քաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյը պատրաստ է 600 հազար եվրո վճարել Ալեքսանդր Պովետկինին, որպեսզի վերջինս իրեն զիջի Վլադիմիր Կլիչկոյի հետ մենամարտելու իրավունքը: Բանն այն է, որ IBF-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն պետք է իր տիտղոսների պաշտպանությունն իրականացնի տիտղոսի պարտադիր հավակնորդ Ալեքսանդր Պովետկինի հետ: Նրանց մինչեւ ապրիլի 25-ը ժամանակ է տրվել բանակցել առաջիկա մենամարտի կազմակերպման շուրջը: Սակայն IBF-ի կանոններում կետ կա, որի համաձայն հնարավոր է, որ Հեյը հանդիպի Կլիչկոյի հետ:

Ժամանակին Հեյը 600 հազար եվրո էր վճարել Զոն Ռուիզին եւ վերջինս Վալուեւի հետ մենամարտի իրավունքը զիջել էր բրիտանացի բռնցքամարտիկին: Եվ ահա Հեյը մտադիր է նույն կերպ վարվել նաեւ Պովետկինի հետ: Սակայն մի բան կարող է խանգարել Հեյին իրականացնելու իր մտադրությունը: Հեյը մտադիր է պահանջել, որպեսզի Կլիչկոյի հետ մենամարտի մրցանակային հիմնադրամը հավասար բաժանվի: Իսկ Կլիչկոները սովորաբար պարգեւավճարի մեծ մասն իրենք են վերցնում: Հենց պարգեւավճարի չափն էլ կարող է խանգարել համաձայնության կայացմանը: Բացի այդ, դժվար է հավատալ, որ Պովետկինը կհրաժարվի աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու հնարավորությունն օգտագործելուց:

Հեյը ցանկանում է Կլիչկոյի հետ մենամարտը կազմակերպել Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում, ինչը մեծ եկամուտ կապահովի 2 բռնցքամարտիկներին էլ: Իսկ եթե Կլիչկոն չհամաձայնվի մենամարտել, ապա Հեյը ռեւանշի հնարավորություն կընձեռի Նիկոլայ Վալուեւին:

Հաջողությունն ուղեկցեց թուրք ծանրորդներին

Ծանրամարտի Եվրոպայի առաջնության երկրորդ օրն անցավ Թուրքիայի ներկայացուցիչների առավելությամբ, որոնք հաղթող ճանաչվեցին տղամարդկանց մինչեւ 62 կգ եւ կանանց մինչեւ 53 կգ քաշային կարգերում: Հայաստանն այդ քաշային կարգերում ներկայացուցիչ չուներ:

Առաջինը մրցահարթակ դուրս եկան կանայք: Պոկում վարժությունում բոլորից հաջող ելույթ ունեցավ թուրք մարզուհի Այլին Դեսդելենը, որը ցույց տվեց 88 կգ արդյունք: Նա այդ վարժությունում արժանացավ փոքր ոսկե մեդալի: Երկրորդ տեղը զբաղեցրեց բելառուսցի Վալենտինա Լյախովեցը, որը 1 կգ պակաս էր բարձրացրել թուրք մարզուհուց: 87 կգ արդյունք էր ցույց տվել նաեւ բուլղարացի 17-ամյա մարզուհի Բոյանկա Կոստովան, որը Լյախովեցից անձնական քաշով ավելի ծանր էր: Կոստովան Եվրոպայի պատանեկան նոր ռեկորդ սահմանեց՝ գերազանցելով բելառուսցի Իրինա Միշչուկի նախկին ցուցանիշը (82 կգ): Ի դեպ, բուլղարացի ծանրորդուհին հրում վարժությունում (112 կգ) եւ երկամարտում (199) թարմացրեց իրեն պատկանող Եվրոպայի պատանեկան ռեկորդները: Կոստովան երկամարտի արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոնուհի:

Մրցակցությունից դուրս էր թուրք Այլին Դեսդելենը, որը երկամարտի 208 կգ (88+120) արդյունքով հռչակվեց Եվրոպայի չեմպիոնուհի: Դա թուրք ծանրորդուհու 4-րդ ոսկե մեդալն էր Եվրոպայի առաջնություններում: Դեսդելենը հրում վարժությունում Եվրոպայի մեծահասակների նոր ռեկորդ սահմանեց՝ 1 կգ-ով գերազանցելով բելառուսցի Նատասիա Նովիկովայի նախկին ցուցանիշը: Բրոնզե մրցանակակիր դարձավ բելառուսցի Վալենտինա Լյախովեցը՝ 198 կգ (87+111):

Տղամարդկանց մրցաշարում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը պահպանեց թուրք ծանրորդ Էրոլ Բիլգինը: Նա վերջին տարիներին զգալի առաջընթաց է ապրել: 2007-ին Բիլգինը բրոնզե մեդալ էր նվաճել, հաջորդ տարի դարձել էր արծաթե մրցանակակիր, իսկ 2009-ին արժանացել էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին:

Պոկում վարժությունում Բիլգինն արդեն 2-րդ փորձից հետո ապահովեց հաղթանակը՝ բարձրացնելով 137 կգ: Նա վարժությունն ավարտեց 139 կգ-ով՝ 4 կգ-ով առաջ անցնելով 2-րդ ցուցանիշն ունեցող ռումինացի Անտոնիու Բուցիից: Հրում վարժությունում Բիլգինն ու Բուցին միեւնույն արդյունքը (165 կգ) ցույց տվեցին: Փոքր ոսկե մեդալը բաժին հասավ Բուցիին, որը մրցակցից 20 գրամով թեթեւ էր: Բիլգինը երկամարտի 304 կգ արդյունքով դարձավ չեմպիոն, Բուցին 300 կգ-ով գրավեց 2-րդ տեղը: 3-րդ տեղը գրավեց ադրբեջանցի Զուլֆուգար Սուլեյմանովը՝ 294 կգ:

Ինտերպոլը կաջակցի ՀԱՀ-ում անվտանգության ապահովմանը

Ինտերպոլի գլխավոր քարտուղար Ռոնալդ Նոուբլը հույս է հայտնել, որ ամռանը Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունում անվտանգությունն ապահովված կլինի եւ արտառոց միջադեպեր տեղի չեն ունենա: Համենայնդեպս, առայժմ ահաբեկչության որեւէ վտանգ չի հայտնաբերվել:

Ըստ Նոուբլի, Ինտերպոլի անդամ բոլոր երկրները պատրաստ են իրենց ջանքերը միավորել աշխարհի առաջնության հանդիպումների անվտանգությունն ապահովելու համար: Օտարերկրացի զբոսաշրջիկների անձնագրերի ստուգման համար կկիրառվեն նորագույն սարքավորումներ: Դրանք հնարավորություն կտան հայտնաբերելու ոչ միայն այն անձանց, որոնք կարող են սպառնալ առաջնության մասնակիցների անվտանգությանը, այլեւ չթույլատրել հանցագործների, թմրանյութերի եւ մարդկանց վաճառքով զբաղվողների մուտքը Հարավաֆրիկյան Հանրապետություն:

ՀԱՀ-ի փոխնախագահ Անդրե Պրեյսը հայտարարել է, որ հարավաֆրիկացիները պատրաստ են հակահարված տալ խուլիգանության ցանկացած դրսեւորումներին: Դրա համար համագործակցություն է հաստատվել Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Հոլանդիայի իրավապահ մարմինների հետ: Հենց այդ երկրների ֆուտբոլասերներն էլ մարզադաշտերում հասարակական կարգի հիմնական խախտողներն են: Այդ երկրներն արդեն պատրաստում են այն ֆանատների ցուցակները, որոնք նախկինում մարզադաշտերում «աչքի» են ընկել իրենց ագրեսիվ վարքագծով: Նման ֆանատներին չի թույլատրվի մեկնել Հարավաֆրիկյան Հանրապետություն:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 07/04/2010 23:04 Page 1

Մշակույթի գործչի շահերն ու... ծիծակը

1-ին էջից

Հիմնական զեկուցողն իր դիրքորոշումն ամրագնդում էր պաշտպանելով արտահայտություններով: Ըստ նրա՝ թեեւ մշակույթի գործիչներն այսօր ձեւավորում են մեր հասարակությունը, սակայն նույն հասարակությունը թույլ է տալիս, որ նրանցից գողանան իրենց ունեցվածքը, իսկ նրանք անպաշտպան են մեր պետությունում: Վրաստանի օրինակը բերելով, ուր մշակութային այս «պիրատությունն» իսպառ վերացված է, պատգամավորը նկատեց, որ եթե ուզենանք՝ մեր երկրում էլ ակնթարթորեն կարող ենք այս հարցը լուծել: Խոսելով այն զգուշացումների մասին, որ իրեն տարբեր շրջանակներից արվել է, թե գործ չունեք, չգիտեք՝ ովքե՞ր են «կռիշաներն» էդ գործում, Վարդանյանը նկատեց, թե վերջապես վերջին 19 տարում հասունացած այս խնդիրը պետք է լուծվի՝ չվախենալով ոչ «կռիշաներից», ոչ էլ նրանց հովանավորներից: Նա խայտառակություն անվանեց այն վիճակը, երբ կինո «Մոսկվայում» «Ավատարի» ցուցադրման ժամանակ, որի տոմսը 1500 դրամ էր, ողջ Երեւանում 300 դրամից սկսված վաճառում էին այդ ֆիլմի «պիրատային» DVD-ները, առա հիշեցրեց Մայքրոսոֆթի այն հայտարարությունը, որ 2009-ին Հայաստանը համարվել էր 90 տոկոսով գողացված ու կեղծված համակարգչային ծրագրերի երկիր: Պատասխանելով պատգամավորների հարցերին, նա հավաստիացրեց, որ դրոշավորման պարտադիր պայմանի հետեւանքով սկավառակների գինը չի բարձրանա, քանի որ ոլորտում աշխատում են 200-300 տոկոսանոց շահույթով, որի մեծ մասը գնում է «կռիշաներին» ու նրանց հովանավորներին, իսկ հիմա օրենքը եթե ընդունվի, շահույթը կգնա լիցենզիան գնողներին եւ մշակույթի գործիչներին, որպես վերջիններ աշխատանքի դիմաց հատուցված գումարներ: Նա համաձայն չէր կառավարության առաջարկներին, որով, իր խոսքով, ուզում են միավորել իր եւ կառավարության նախագծերը. կառավարության նախագծում, ասում էր Վարդանյանը, խոսքը 7 աղրանքատեսակի մասին է, որտեղ տեսաձայնասկավառակներից հետո գալիս են լվացքի փոշին, օճառը, պահածոները, թքու վարունգը. իր նախաձեռնությունը վերաբերում է միայն հեղինակային իրավունքներին, իսկ կառավարությունն ուզում է ֆիսկալ՝ հարկային խնդիրներ լուծել, մուրաբաները սվերից բերել հարկման դաշտ. «Ինձ համար մարդկայնորեն անընդունելի է, որ մշակույթի գործչի ծահերը համեմատում են ծիծակի կամ թքու վարունգի հետ»: Նա նաեւ մի տխուր վիճակագրություն բերեց, որ 1993-2010 թվականներին ընթացքում հեղինակային իրավունքի խախտման ընդամենը 7 դեպք է գրանցվել, որոնցից 5-ի հանդեպ գործի հարուցումը մերժվել է, երկուսն էլ դատարանից է հետ ուղարկվել:

Նախաձեռնությանը դրական եզրակացություն տված գլխադասային հանձնաժողովի նախագահ **Վարդան Այվազյանը**, ողջունելով գաղափարը, սակայն համագործակցության դաշտ տեսավ կառավարության հետ, քանի որ օրենքը գործածելու եւ աշխատեցնելու առումով՝ մեխանիզմները հստակեցնելու եւ սահմանելու խնդիր կա. ասենք, ո՞վ է լիազոր մարմինը լինելու, ո՞վ եւ ինչպե՞ս է առգրավելու ապօրինի աղրանքը, ինչպե՞ս է ոչնչացվելու: Նա հակված էր օրենքն առաջին ընթերցմամբ ընդունելու եւ մինչեւ երկրորդ ընթերցում այս բոլորը ներառելուն:



Սակայն պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ **Արմեն Ալավերդյանը**, որպես կառավարության ներկայացուցիչ ինքը եւս կողմ լինելով գաղափարին, հակված էր 15 օրով հետաձգել օրենքի քվեարկությունը, մինչեւ իրավաբանական լրացումները ներառվեն: Նա նաեւ առաջարկում էր մի բան, որին ի սկզբանե համաձայն չէր Կ. Վարդանյանը՝ դրոշավորող աղրանք դիտարկել նաեւ համերգի ու թատրոնի տոմսերը. թքու վարունգն ու պահածոն չկան, հավաստիացրեց: Ըստ նրա՝ այժմ սկավառակների շրջանառությունը ապօրինի է, քանի որ դրոշավորման օրենք դեռ չկա, 14 հազար կրպակ CD է վաճառում, նրանց հետ ինչպե՞ս վարվել, դրա համար էլ, եթե օրենքն ընդունվի, այն կիրառելու համար մինչեւ 2011 թվականը ժամանակ է պետք:

Նրան ուղղված հարցերում էր, որ բազմաթիվ մտահոգություններ հնչեցրին պատգամավորները: **Լարիսա Ալավերդյանն**, օրինակ, կոռուպցիոն նոր դաշտի եւ ոլորտի մոնոպոլացման հնարավորություն տեսավ, **Հերմինե Նաղդալյանը** մայրաքար (երեւի մայրության օրն էր՝ դրա համար) խորհուրդ տվեց Կ. Վարդանյանին՝ այս թեմաներով կոռեկտ խոսել (դե նա ինչ ասես ասել էր՝ անարխիա, խայտառակություն եւ այլն), **Սյոնպա Սաֆարյանի** հարցին էլ (նա հիշել էր շատ տարիներ առաջ մամուլի մի հրապարակումը, որ ՊԵԿ-ի նախագահն ու ոստիկանության ներկայացուցիչը այս բիզնեսն իրենցով անելիս իրար հետ կարգին ընդհարվել էին) մի փոքր հախուռն էր պատասխանել Արմեն Ալավերդյանը, որից հետո **Վիկտոր Դալլաքյանը** փորձեց կարգի հրավիրել ՊԵԿ նախագահի տեղակալին, թե նա պետք է ոչ թե խորհուրդներ տա պատգամավորներին, այլ պատասխանի նրանց հարցերին: Այս պահից իրադարձությունները անսպասելի զարգացում ունեցան: Ա. Ալավերդյանը նկատեց, թե անձնական պահերը կարելի է թողնել ուրիշ տեղ եւ ոչ թե դահլիճում (Դալլաքյանին էր ասում, թե Սաֆարյանին՝ պարզ չեղավ), միջամտեց **Հովիկ Աբրահամյանը**. «Մի բոպե, եթե այստեղ ինչ-որ մարդիկ կան, որ իրենց համարձակությունն ու շնորհքը ուզում են ցույց տալ այս դահլիճում կամ փորձում են ինչ-որ ծառայություններ մատուցել որոշ մարդկանց, ես գտնում եմ, որ ճիշտ տեղը չեն ընտրել, եւ բոլորին հրավիրում եմ կոռեկտ պահվածքի Ազգային ժողովի դահլիճում: Եթե հարցեր ունեն՝ կարող են հանդիպել: Պարո՛ն Դալլաքյան, որ Դուք խոսում էիք, ես Ձեզ չէի խանգարում»: Կարծեմ Դալլաքյանն ասաց, թե իրեն ոչ մեկը չի կարող խանգարել կամ դրա նման մի բան. «Եվ ընդհանրապես, դու չես կարա ոչ մեկին խանգարել, բայց եթե պետք է լինի...»: «Ժամանակն ավարտվել է, հնարավորություն տվեք մյուսներին խոսելու», Դալլաքյանի տեղից խոսքը կտրեց Հ. Աբրահամյանը: Ա. Ալավերդյանի խոսքից հետո Վ. Դալլաքյանը ճշտեց. «Լավ չհասկացա ԱԺ նախագահի ռեպլիկը՝ ծառայություն մատուցելը Ձեզ էր վերաբերում, թե՞ ինձ»: Ալավերդյանը մինչ ուսերն էր թոթվում, թե ո՞նց կարող է ԱԺ նախագահին այդպիսի բան ասել, ԱԺ նախագահն անջատված խոսափողի հետեւից արձագանքեց երրորդ դեմքով. «Համարձակություն ունեցի, ԱԺ նախագահին դիմի այդ հարցով՝ կոպատասխանի»:

Նյարդային այս բռնկումների մեջ բոլոր լրագրողներն էին համակարծիք, որ մեկ անգամ եւս երեւակվեց ներքաղաքական լարվածության, իշխանության տարբեր բեւեռների եւ ուժային կենտրոնների ներկուլիսային մրցակցության հրապարակային արձագանքը: Չենք կարծում, որ դա միակը կլինի:

Ադրբեջանցին հանձնվեց Ադրբեջանին

Երեկ հայ-ադրբեջանական սահմանագծի Երասխավան-Սադարակ հատվածում Կարմիր խաչի միջազգային կազմակերպության միջնորդությամբ ադրբեջանական կողմին է հանձնվել Ադրբեջանի քաղաքացի Հասանով Ռաֆիկ Ռահման օղլին: Նա Կարմիր խաչի ներկայացուցիչների հետ զրույցում նշել է, որ որեւէ բողոք չունի եւ ցանկանում է վերադառնալ հայրենիք: Հիշեցնենք, որ Ռահման օղլին հայ-ադրբեջանական սահմանի Նոյեմբերյան-Ղազախ հատվածը հատել է դեռեւս 2008-ի հոկտեմբերին:

Ապրիլի 3-ին Ադրբեջանին են հանձնվել նաեւ երկու դիակներ: Բացի այդ, ներկայումս հայկական կողմում են գտնվում մեկ զինվորական եւ մեկ քաղաքացիական անձ, իսկ ադրբեջանական կողմում՝ 6 հայ զինծառայող եւ մեկ ընտանիք: Ընտանիքի անդամները հայ-ադրբեջանական սահմանը Երասխավան-Սադարակ հատվածում հատել են 2010-ի հունվարի 10-ին («Ազգ»-ը տեղեկացրել էր այդ մասին):

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ներկայացուցիչ, Գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հանձնաժողովի աշխատանքային խմբի ներկայացուցիչ, փոխգնդապետ Սամվել Ասատրյանը նշել է, որ իրենք Ադրբեջանի Գերիների, պատանդների եւ անհայտ կորածների կոմիտեի ներկայացուցիչների հետ քննարկել են հայ գերիների վերադարձման հարցը՝ չկոնկրետացնելով, թե երբ է նախատեսվում դա:

Հ. Ա.

ՕԱՆՈՒՅՑՈՒՄ

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ի բիզնես ինֆորմացիայի եւ խորհրդատվության բաժինն առաջարկում է կազմակերպել էքսպորտային վարկեր Սլովակիայից Հայաստան եւ ԼՂՀ

Վարկերը երաշխավորվում են Սլովակիայի պետության կողմից.
- հատուկ ապրանքային վարկատեսակ
- կարճաժամկետ, միջին ժամկետի եւ երկարաժամկետ գործարքներ
- ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում
- վարկերը տրամադրվում են ցանկացած արժույթով:

Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է ներկրել Եվրոպական արտադրության որակյալ ծառայություններ եւ ապրանքատեսակներ.
- բժշկական սարքավորումներ,
- գյուղատնտեսական տեխնիկա եւ նյութեր,
- շինարարական տեխնիկա, հոսքագծեր եւ նյութեր,
- կենցաղային տեխնիկա,
- տարբեր նշանակության եւ տարողության տրանսպորտային միջոցներ,
- կլիմատիզացիոն համակարգեր,
- սննդամթերք,
- եւ այլն:

Ներկրվող ապրանքների ու ծառայությունների ոլորտների եւ տեսակների սահմանափակում չկա:

Հատուկ բարենպաստ պայմաններով իրականացվում են ՀԷԿ-երի կառուցման, սարքավորումների ներկրման եւ գործարկման աշխատանքները:

Վարկերը տրամադրվում են տարեկան 7-8% տոկոսադրույքով:

Մարման ժամկետը՝ 5-8 տարի:

Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել **www.nt.am** կամ **www.market. nt.am** էլ. կայքերը, գրել մեզ՝ **manush@nt.am** հասցեով, այցելել մեզ՝ Երեւան, Իսահակյան 28, կամ զանգահարել **+37410 56-59-65, 094 366 989** հեռախոսահամարներով:

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը ապրիլի 7-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց ՀՀ ԿԲ 2009 թ. ֆինանսական հաշվետվությունը, ՀՀ ԿԲ 2009 թ. ծախսերի նախահաշվի եւ կապիտալ ներդրումների ծրագրի տարեկան կատարողականը եւ ՀՀ ԿԲ 2009 թ. ՀՀ միջազգային պահուստների վիճակի եւ կազմի վերաբերյալ տեղեկատվությունը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Հավելված 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«2009»
հիմնադրամի 2009 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ **«Գիտելիք» համալսարան» հիմնադրամ**
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի հրամանով, պետական գրանցման վկայական 03Ա 061843 եւ (կամ) Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 29.12.2003 թ.:
3. Հրմնադրամի գտնվելու վայրը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Ռինդ, հեռ. 0281 2 07 88:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Մ. Մկրտչյան:
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Գ. Մկրտչյան, Ե. Բալյան, Գ. Դավթյան:
6. Աշխատակազմը՝ 49 մարդ:
7. Իրականացված ծրագրերը՝ Բարձրագույն կրթություն:
8. Ֆինանսական աղբյուրները՝ Ուսանողական վարձեր, բարեգործություն:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 93128,0 հազ. դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 104561,0 հազ. դրամ:
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

Գործադիր տնօրեն՝ Մ.Մկրտչյան
Հաշվապահ՝ Ղ.Գասպարյան

Աուդիտորական եզրակացություն

Մեր կարծիքով Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում Հիմնադրամի ֆինանսական վիճակը եւ գործունեության արդյունքները 31.12.2009 թ. դրությամբ՝ համաձայն ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների եւ ՀՀ «Հիմնադրամների մասին» օրենքի:

25 մարտի 2010 թ.

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ
Տնօրեն
Ընդհանրացված Աուդիտոր
Գոռ Դավթյան

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 31. 12. 2009

		Ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Մեգա ՌԱՎ» ՍՊԸ	
Փաստացի գործունեություն հիմնական եկու տեսակները		
Պետռեգիստրում գրանցման համարը		4211002677
Հարկ վճարողի հաշվառման համարը		03533505
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք	հեռ.
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Կոտայքի մարզ, գ. Վ. Պտղնի, Նոր թաղ. 1 փող. խ. ավտոտն. 63	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	0	5000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	0	5000
II. Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	0	50
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	0	5
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	0	55
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	0	5055
ՊԱՍՍԻՎ	**տող**	**Նախորդ տարվա վերջին**	**Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին**
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	0	50
Ընդամենը սեփական կապիտալ	300	0	50
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	0	5005
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	0	5005
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	0	5055

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01.01.09-31.12.09

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորդական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորդական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	0	0
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	0	0
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	0	0

Ռաֆիկ Հահբազյան
Կարինե Հակոբյան
Արտաշես Դավթյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 7.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: